Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

17154
17155
17156
17157
17158

891.99
U-39

# ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

## „ՍԷՅԵԱԴԻ“

ԿԱՊԻՏԱՆ ՊԵՏՐՈՍ-ԲԷԳԻ ՄԱԴԱԹԵԱՆՑ.

1859 *թ.* *Օգոստոսի* 1-*ից* *մինչև* 1860 *թ.* 25 *Յունվարի։*

—(ՏԵՏՐԱԿ ԵՐՐՈՐԴ.)—

Ա. *մասն։*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐԻ ՂԱՍԱԲԵԱՆՑ։

ԲԱԳՈՒ.

ՏՊԱՐԱՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԻ ՂԱՍԱԲԵԱՆՑ։

1884.

891.99
Մ-39

# ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

## „ՍԻՅԵԱԳԻ"

ԿԱՊԻՏԱՆ ՊԵՏՐՈՍ-ԲԷԳԻ ՄԱԴԱԹԵԱՆՑ.

1859 *թ. Օգոստոսի* 1-*ից մինչև* 1860 *թ.* 25 *Յունվարի։*

—(ՏԵՏՐԱԿ ԵՐՐՈՐԴ.)—

**Ա.** *մասն։*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱՂԷՔՍԱՆԴՐԻ ՂԱՍԱԲԵԱՆՑ։

ԲԱԳՈՒ.
ՏՊԱՐԱՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԻ ՂԱՍԱԲԵԱՆՑ։
1884.

3754

Дозволено цензурою 25 Іюля 1883 г. Тифлисъ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ Арм
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Баку. Типографія А. К. Касабова.

3696
47

19 11/XI 31г.

20 03

# ՑԱՆԿ.

## Ա. ՄԱՍԻՆ.

Երես.

Երգ 'ի պատիւ Մագիստրոս Մսերայ Մսերեանց և որդւոյ նորին Զարմայրայ . . . . . 1
Բերմունք ժամանակի . . . . . 3
Երևակայութիւն . . . . . 4
Անաչառ դատաստան . . . . . 5
Գեաֆ . . . . . . . 8
Левъ безъ львицы . . . . . 9
Երգ . . . . . . . 10
Տաղ վասն արարչագործութեան և մարդեղութեան Աստուծոյ . . . . . . 11
Հերքումն մեծ. Եւգէնիյ-Սիւ հեղինակին «որ ասէ Արդարադատ և մարդասէր թագաւորաց մարմնական ախտն ներելի է» . . . . 12
Առ * * * պարոն . . . . . 14
Վախճան վավաշ սիրոյ և այլն. . . . 15
Եղրափակութիւն . . . . . 17
Տեսութիւն ընդ բաղդի . . . . 18
Երգ 'ի պատիւ * * * * իշխանուհւոյն . . 20
Անկեղծ և կեղծաւոր . . . . 21
Հարիւրերրորդ սաղմոս Դաւթի . . . 26
Երգ ըստ եղանակի Օսմանեան «Շաքի հանգի» ասած երգոյն . . . . . 27
Երգ . . . . . . . 29

Երգ 'ի դիմաց Հայաստանի առ ազգային յորդորեցուցիչս . . . . . . . 30
Առ Հայաստան . . . . . . 32
Յանկարծածին խօսք . . . . . . 33
Ի դիմաց Շամախեցի պ. Գէորգայ Գոգջայեանց 'ի վերայ Թոռանց իւրոց՝ Միքայէլի և Ջումշուտի 'ի միում եօթնեկի մահացելոյ . . . . 34
Առ լեառն Կովկաս. . . . . . 36
Ողբ 'ի դիմաց սուրբ Կուսին առ Միածին որդին իւր 39
Հատուցումն . . . . . . 40
Յանկարծախօս բան. . . . . . . 41
Նորաձև երգ . . . . . . . —
Նոր ուսումնականք . . . . . 44
Միտք մարդոյ . . . . . . 47
Գեաֆ շահնազի . . . . . . 48
Անհերքելի ճշմարտութիւնք . . . . 49
Ի Մասիս լեռնէ առ Հայաստան . . . 50
Խորհրդաւոր լուռ . . . . . . 51
Ուսեալ թութակ . . . . . . 53
Յանկարծախօս բան. . . . . . 59
Երգ . . . . . . . . —
Վիճակ խելօք Հայոց իւր ազգի միջումը . . 60
Տեսութիւն . . . . . . . 70
Մտածմունք . . . . . . . 73
Նմանութիւն. . . , . . . 74
Գեաֆ . . . . . . . 75
Գանգատանք . . . . . . 76
Բամբասանք . . . . . . —





Յիշատակարան հոգևոր և մարմնաւոր երգչաց ազգի Հայոց . . . . . . . 78
Պատասխանի պարոնի միոյ . . . . 83
Հայոց իշխան. . . . . . . —
Գեաֆ նորա . : . . . . . 84
Գեաֆ շահնազի . . . . . . 85
Հանելուկ . . . . . . . 86
Երգ առ նորաեկ «կռունկ Հայաստան աշխարհի» —
Երգ առ նոյն «կռունկն». . . . . 88
Տրտունջ . . . . . . . 89
Առ ամենակալն Աստուած . . . . 90
Տրտունջ ըստ եղանակի «սազի բիւլբիւլ» Տաճկերէն խաղին. . . . . . . 92
Թատրոն Հայոց 'ի Տփխիս . . . . 93
Երգ 'ի դիմաց Անի քաղաքին Հայոց . . 97
Երգ սպառնալիք Տրդատայ արքայի առ ազգն Պարսից 98
Երգ ըստ եղանակի «Ջիկարս դաղ ես արել» . 101
Երգ ըստ եղանակի «Միրզաջանի գեարաքլի» երգոյն 102
Ողբ 'ի դիմաց այրւոյն Հայկայ . . . . 104
Անհամաձայնութիւն հոգւոյ ընդ մարմնոյ. . 105
Յանկարծախօս բան. . . . . . 107
Տաղ յաւուր ճրագալուցի ծննդեան . . . 107
Երգ յաւուր տօնի ծննդեան . . . . 108
Մէկ քանի խօսք վասն օժիտաւոր աղջկանց . 110
Գեաֆ . . . . . . . . 111
Երգ . . . . . . . . 112
Կարմիր գինին է լաւ, թէ սպիտակն. . . 113
Ода . . . . . . . . 115

Երգ աղէտալի ձայնիւ երգելի . . . . 117
Երգ սիրոյ . . . . . . . . 118
Առ Հրաշագեղ օրիորդ ազնուականի . . . 119
Տաղ 'ի դիմաց իւրաքանչիւր Հայկազնոյ առ Հայաստան ըստ եղանակի «առ զամբիւղ» երգոյն 120
Երգ ըստ եղանակի «առ զամբիւղ» երգոյն. . 122

## Բ. ՄԱՍԻՆ.

Եղերերգութիւն 'ի դիմաց Երասխայ առ Զանգի ըստ եղանակի «Հարամ սանայ բախար Զանգի» . 1
Նկարագրութիւն բնութեան Հեղինակին . . 11
Զայն Արագած լերին առ Սէյեադ . . . 13
Զգտումն դատողութեան . . . . . 14
Քառոտնեան ոտանաւոր . . . . . 16
Յորդորակ վերնոյն . . . . . . 17
Հակաճառութիւն շանց ընդ կատուաց վասն իրաւանց . . . . . . . 18
Զրոյց . . . . . . . . 24
Հարկաւոր գիտելիք. . . . . . 27
Առ կռունկն Հայոց աշխարհի . . . , 28
Եզրակացութիւն . . . . . . 29
Առակ սև կատու և մուկն . . . . 30
Խրատ . . . . . . . . 36
Սուր խօսք . . . . . . . —
Յանկարծածին բան. . . . . . 37
Գագիկ արքայ Հայոց 'ի Պօլիս առ ազգն Հայոց . 38
Զայն Սէյեադի . . . . . . 40
Իննտասաներորդ դար . . . . . 44



Եզրակայութիւն . . . . . . . 47
Առ Աստուածածին Մարիամ . . . . 48
Գովասանք գեղոյ . . . . . . 49
Հարկաւոր խօսք , . . . . . 50
Բազէ . . . . . . . . 51
Երգ 'ի գոյն Մազուրկա պարու. . . . 52
Ողբ վասն ազգի . . . . . . 54
Յորդորակ . . . . . . . 55
Մուխամմազ . . . . . . . —
Յանկարծածին խօսք . . . . . 57
Բաղդն առաւել սիրէ զագահս քան առատաձեռն —
Յանկարծածին զրոյց . . . . . 59
Երգ ըստ եղանակի «Մուզուրկա խաղոյ» . . 60
Նշանակութիւնք աւուրց չարչարանաց շաբաթուն մեծի պահոց . . . . . . 61
Աւետարան . . . . . . . 62
Թէջնիս Հայերէն . . . . . . 63
Յանկարծախօս բան. . . . . . 64
Ի դիմաց Տրդատայ արքայի առ Աստուած . . —
Տեսիլ . . . . . . . . 65
Ներգործութիւն փողոյ . . . . . 66
Երգ յաղագս Հայաստանի. . . . . 67
Զայն ամուսնոյ Սէյեադի առ նա . . . 70
Պատասխան Սէյեադի առ ամուսին իւր . . 72
Հաւատոյ և ուսման սէրը Շամախւոյ Հայերի . 74
Յանկարծածին խօսք . . . . . 77
Երգ յաղագս դրութեան մարդոյ . . . 78
Վասն սրութեան մտաց . . . . . 79

Պիտանի խօսք . . . . . . 80
Աննպատակ զուարճաբանութիւն . . . 81
Քաղցրախօսութիւն. . . . . . 82
Պատճառք կորստեան ամենազօր տէրութեան Յունաց ազգի . . . . . . . . —
Երգ հոգեորական . . . . . . 86
Երգ 'ի դիմաց Նորավանից անապատին Վայոց Ձորոյ 87
Պիտանի խօսք . . . . . . 88
Անկարգ մարդ . . . . . . —
Զարախօս . . . . . . . 89
Ապացոյց բնական ատելութեան Հայոց . . 90

## Գ. ՄԱՍԻՆ.

Երգ . . . . . . . . . 1
Երգ առ բու թռչուն . . . . . 2
Երգ առ տատրակ թռչունն . . . . 3
Թաջնիս Հայերէն վասն որպիսութեան բաղդին . 4
Ներբող 'ի պատիւ Եկզարխին Վրաստանու . 5
Յանկարծածին խօսք . . . . . . 6
Նմանութիւն գիւղական և աւանակ իւր . . 7
Սուրբ լուսաւորչական դաւանութիւն . . 11
Ի դիմաց թռչնոց առ արծիւն. . . . . 13
Առ բիւլբիւլ թռչունն . . . . . . 14
Մարդ . . . . . . . . . 16
Խօսակցութիւն Սէյեադի ընդ միոյ վարդապետի . 17
Բարեպաշտ տիկին Աննա Սահակեան . . . 21
Բան ըստ պատշաճին . . . . . . 22
Խորհուրդ . . . . . . . . 23



Խօսակցութիւն Սէյեադի ընդ միոյ հոգևորականի վասն կերակրոյ . . . . . . . 25
Յուսահատութիւն և յոյս . . . . . 28
Երգ ըստ եղանակի «Տէր ողորմեա» երգոյն . —
Առ մարդն առաջին . . . . . . 29
Երգիծաբանութիւն Պարսից բանաստեղծ Ֆիրդովսի առ Սուլթան Մահմուդ շահն իւրեանց . 31
Յանկարծածին բան. . . . . . . 39
Գուշակութիւնք երևակայութեան . . . 40
Պայծառափայլ իշխանուհի Մարիամ Սողոմոնեան 41
Ի դիմաց Սէյեադի առ մեռեալ Հայազգիքն Շամախի քաղաքի . . . . . . . 43
Յանկարծածին բան. . . . . . . 45
Վէպ արքայի Հայոց Լևոնի առաջնոյ և որդւոց նորա . . . . . . . . 46

ՎԵՐՋ։

Յօրինեալ 'ի պատիւ մեծիմաստ Մանկավարժին Մուշեղ Մուշեղեանց և նորաբողբոջ որդւոց նորին Զարմայրեաց:

# ԵՐԳ.

Որպէս լուսաբերն է որդեակ,
Արեգակն էլ նորա Հայրը,
Նոյնպէս Մեէրն է արեգակ,
Եւ լուսաբերն է Զարմայրը:

Լուսաբերն է արեգական,
Ծագումն աշխարհին գուշակող.
Օրէնք է դրած բնական,
Մէկ մէկուց զատուել չեն կարող:

Զարմայրը իւր զգօնութեամբ,
Է ճիշտ օրինակ Մեերայ.
Քանզի որդին արտօնութեամբ,
Իսկ և իսկ Հօրը պատկեր ա:

Ծառը կը ճանաչվի պտղով,
Աւետարանն է հաստատում.
Հայրը կը ճանաչվի որդւով,
Սա մէկ վճիռ է անպատում:

Անմոռանալի Ներսէսը,
Մէկ օր ցնծութեամբ ինձ եցոյց,
Զարմայրայ թղթոց երեսը,
Հոգիս ուրախութեամբ լցոյց։

Ասաց,, Մսերխ որդին է,
Հայկայ զաւակ ուղղափառ.
Իւր ընկերաց միջին մին է,
Օրհնեալ պտուղ է օրհնեալ ծառ'':

Վեհափառի ասութեամբը,
Ճանաչեցի ես զՄսերը.
Որդւոյ գովեալ ընութեամբը,
Սիրտս մտաւ նոցա սէրը։

Ասացի փառք քեզ Արարի՛չ,
Մոսկվա՛ն այսպէս հայ ունի.
Է իսկ հաւատոյ պարարիչ,
Ներսէսի պէս վկայ ունի։

Թէ չէս նիրհած Հայոց Աստուա՛ծ,
Բղխող շնորհատու սուրբ հոգւոյն,
Անմատչելի ես եւ գթած,
Նպա՛ստ լեր հօրըն և որդւոյն։

Որք կարասցեն քոյ լուսովդ,
Լուսաւորել Հայոց միտքը.
Վասն զի կեան քոյ յուսովդ,
Սէյեադի պէս միամիտքը։

* *
*



# ԲԵՐՄՈՒՆՔ ԺԱՄԱՆԱԿԻ.

Քարոզի՛չ լուեա՛, զի մարդկանց նպատակը փողն է հիմա,
Նրանց մեծ Աստուածաբանը՝ անհիմն խօսողն է հիմա,
Գովաբանութեան արժանին՝ խմող արբեցողն է հիմա,
Սրբակենցաղ ճգնաւորը՝ աղքատաց զրկողն է հիմա,
Մխով բանիւ մարդկան ազգի սիրականը գողն է հիմա։

Թէ յոյժ աղօթասէր լինես՝ քեզ սուտ ճգնաւոր կը կոչեն,
Թէ գթած սրտի տէր լինես՝ յայտնի կեղծաւոր կը կոչեն,
Թէ հրաշագործ տէրտէր լինես՝ ծածկեալ մարմնաւոր կը կոչեն,
Թէ ամենասուրբ ծեր լինիս՝ գլուխ մեղաւոր կը կոչեն,
Աշխարհի մէջ պատուարժանը վավաշ շնացողն է հիմա։

Ոչինչ տեղ քեզ չեն ընդունել՝ մինչ ջիբումդ փող չունենաս,
Անյայտ կու մնաս եթէ շատ՝ եկող գնացող չունենաս,
Քեզ մին սև փող գին չեն դնիլ՝ թէ կին գեղեցիկ չունենաս,
Անբաղդ ես թէ որ ցաւերըդ՝ սրտառուչ լացող չունենաս,
Անառակութիւն չիմացող մարդը՝ անարդ հողն է հիմա։

Վատ բաներից փախչողների՝ անունը անբան են դրել,
Կաշառառութեան կոչումը՝ արդար դատաստան են դրել,
Զարութիւնը ամեն ուրեք՝ բարութեան նշան են դրել,
Գազանին ոչխար անուն՝ ոչխարին գազան են դրել,
Կատուն մկանց դատարանի՝ անաչառ դատողն է հիմա։

Բաների վերջին նայեցէ՛ք՝ սրանք դեռ էնքան վատը չեն,
Սոքա նորաբողբոջ ոստ են՝ հաստատագոյն արմատը չեն,
Ապագայ չարութեանց մօտին՝ սրանք տասնից մէկ հատը չեն,
Այլք այս գործերը չեն պատմիլ՝ ճշմարտաբան Սէյեադը չեն,
Զի նա միայն ժամանակիս՝ ընթացից պատմողն է հիմա։

---

## ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ.

„Երևան անկայ ես՝ մէկ գազանի ձեռ,
Ինքը զառամեալ՝ ատամները սուր.
Երևանցիք եղած՝ ահուց կիսամեռ,
Շունչ նորա այրէր մարդիք որպէս հուր։

Գիշեր էր երբ նրան՝ ես պատահեցի,
Պօլիցի մէյդանի՝ Արևելքումը,
Կամէի սպանել, ձեռս պահեցի,
Որ մարդ սպանող՝ չիլիմ վերջումը։

Տեսեալ զիս նա գոռայ՝ ձայնիւ ահագին,
Յայտնապէս կամում էր ինձ կլանել.
Աներկիւղ մօտեցայ մարդակեր գայլին.
Կամելով երեսին՝ մէկ բարդ թքանել։

Գոյնը իբրև մաղձ՝ մազերն սպիտակ,
Աչքերը կարմրած՝ վարազ խոզի պէս.
Երբ որ ես բարկացեալ՝ ետու մէկ ապտակ,
Նոյն ժամոյն թուլացաւ՝ վավաշ կնկայ պէս։

Ասացի վատ գազան՝ զիս լաւ ճանաչիր,
Որ Հայկայ ախոյեան՝ որդիքներիցն եմ.
Թէ կամիս ազատիլ՝ ե՛կ ոտս պաչի՛ր,
Ս է յ ե ա դ ն եմ նոր Հայ չեմ՝ հին Հայերիցն եմ։



### ՋՕՐԱՒՈՐ ԲԱՆ.

Զոր ինչ կամիք՝ զի արասցեն ձեզ մարդիք,
Յամենայն ժամ՝ դուք էլ զայն առնել պարտիք։

,, Ս Է Յ Ե Ա Դ ''

## ԱՆԱՉԱՌ ԴԱՏԱՍՏԱՆ.

Ագուէսը Առիւծին՝ աջակից գոլով,
Գայլին դատաւոր՝ շինեց ոչխարաց.
Երբ գայլի պահանջը՝ եղև յոյժ յոլով,
Ոչխարաց ազգը՝ տանել չի կարաց։

Դարձան առ առիւծը՝ լալագին դիմօք,
Ասացին մեր ազգից՝ տուր մեզ դատաւոր.
Որ նրան ծառայենք՝ մեք սրտի մտօք,
Գիտեմք քեզ որ դու ես՝ արդար թագաւոր։

Մեք գայլին չենք ասում՝ թէ անարժան է,
Նա ունի սուր ատամ՝ թափանցող աչքեր.
Քաւ լիցի մեր մտքից՝ չի անցած բան է,
Որ ասենք գայլն է՝ այս ինչ մեղաց տէր։

Միմիայն մեր լեզուն՝ նա չի հասկանում,
Մեզ հետ միշտ խօսումէ՝ թարգմանի լեզուաւ.
Այն բանից ոչ ոք՝ շահ չի ստանում,
Որի որ միջումը՝ թարգմանիչ գըտվաւ։

Ամենայն թարգմանիչ՝ խիղճ չի ունենալ,
Որ պատմէ իւր մեծին՝ բանը տեղըստեղ.
Որից շահ չունենայ՝ նրան չի բանալ,
Այնպիսին անիծեալ՝ լիցի ցեղըացեղ։

Ինչ ազգի դատաւոր՝ որ իւր ազգից է,
Էն ազգի վիճակն է՝ երջանիկ վիճակ.
Աշխարհիս միջին նա՝ երկնայնոց կից է,
Նրանի էն ազգին՝ լինի լուսնոյ տակ։

Վասնորոյ աղաչեմք՝ ո՛վ Տէր մեր գթած,
Որ դու մեր ազգից մեզ՝ դատաւոր շնորհես.
Բարեպաշտ որդիքդ՝ պահեսցէ Աստուած,
Զի գիտեմք դու միշտ մեր՝ բարին կը խորհես։

Առիւծը երեսը՝ դարձոյց աղուէսին,
Ասաց այս բողոքից՝ ի՞նչ ես հասկանում,
Կենացս միջին չեմ՝ տեսել քեզ պէս հին,
Օրինապահ ամեն՝ կերպ դատաստանում։

Իմ կարծեօք աշխարհքը՝ իրաւունք ունին,
Պահանջել իրանցից՝ ինքեանց դատաւոր.
Անբարբառ գայլին ո՞նց նոքա ընդունին,
Թէև նա ոչինչ կերպ՝ չէ արատաւոր։

Աղուէսը գլուխ ետ՝ առիւծին, ասաց,
Արքայ թէ ոչխարաց՝ ձայնին դու նայես.
Պիտի քո զինուորքդ՝ թողուս առանց հաց,
Մի՞թէ դու անողորմ կամ անխնայ ես։



Քոյ ընտիր զինուորաց՝ մէկը գայլն է,
Ո՞նց կուլի որ նորան՝ թողուս անպաշտօն.
Զինուորաց կեանքը քոյ՝ փառաց սայլն է,
Է՞ր նրան զրկես տաս ոչխարաց արտօն։

Հաւատա իմ խօսքիս՝ որ առանց զինւոր,
Գոմէշք, աւանակք, ոչխարք, եղջերուք,
Երեսիդ կասեն քեզ՝ չես մեր թագաւոր,
Սա է իմ խորհուրդս․ Արքայ ողջ լերո՛ւք։

Առիւծը հաւանեց՝ խօսքը աղուէսի,
Ոչխարաց բողոքը՝ թողեց անկատար.
Ոչխարքն էլ երբ լուան վճիռ այսպիսի,
Քաշեցին գայլերի՝ բեռն անդադար։

Ոչխարի խնդիրքը՝ ամեն ատենում,
Հնարքներովը՝ խրթին աղուէսի.
Անվախճան, անվճիռ՝, դատարկ են մնում,
Խեղճ մարդոյ գործն էլէ լինում այնպիսի։

Երևի ով 'ի բնէ՝ խեղճ է ստեղծուած,
Նա պիտի կենայ մէջ՝ լաւ օր չի տեսնայ։
Այս բանին ի՞նչպէս է՝ ցուրտ նայում Աստուած,
Ս է յ ե ա դ շատ մի՛ բանալ՝ թող այսպէս մնայ։

*
* *

## ԳԵԱՓ.

Նաւավար կոտրած նաւովդ,
Ե՞ր եղեր ինձ երաշխաւոր.
Ծո՛վ դու քոյ ալեկոծովդ,
Ե՞ր գիս արարեր սգաւոր։

Երևի ով ձեզ յոյս կապեց,
Կուլի ծառայ անյուսութեան.
Խօսեցէք ահը գիս լափեց,
Զունի՞ք դուք ձիրք խրախուսութեան։

Երևի դուք էլ գիտէիք,
Սէյեադի անբաղդութիւնը.
Վասնորոյ գզալ պիտէիք,
Որ զուր է ձեր յաղթութիւնը։

*
* *



## Левъ безъ львицы.

У льва львицу отняли
Оставили безъ надѣжды;
Шкуру ея смяли,
Не милосердные невѣжды.

За то дали ему право.
Быть совѣтникомъ у слона;
Но о львицѣ не слышно право,
Вернулась ли къ мужу она?!

Плохо цѣною супруги,
Имѣть мѣсто дорогое,
Оно лошадь безъ подпруги;
Болѣе ни что другое!

Увы! сколько въ наше время,
Мы видимъ львовъ безъ львицъ;
Это не сносное бремя,
Для однихъ совѣтныхъ лицъ.

А у кого совѣсти мало,
Тому по колѣно море;
Но льву тяжко стало,
Онъ не вынесъ это горе!

С е я д ъ! баснѣ сей ты вѣрь,
Ибо въ нашъ превратный вѣкъ,
Не всякій левъ бываетъ звѣрь;
Въ басняхъ звѣрь,-есть чѣловѣкъ:

# Ե Ր Գ.

Դաշտերի ծաղիկներումը,
Վարդին եմ եղել սիրահար.
Աշխարհի վատ գործերումը,
Վարդն է սրտիս ուրախարար:

Որ ասուր լինի քաղցրագոյն,
Նախանձելի սիրով լցուած.
Օր ասուր լինի կարմրագոյն,
Համարեա թէ միշտ նոր բացուած:

Չէ հաստատ բաղդի սնոտին,
Միակերպ չէ նա ամեն օր.
Յանկարծ կարմիր վարդի մօտին,
Կը սերմանէ դառը խոտը:

Վարդը նոյնպէս չի չորանալ,
Կարմրութիւնը կուլինի վերան.
Բայց ինչ կուլինի ուրանալ,
Որ անուշ հոտ չի լինիլ նրան:

Մէյեադ անչափ ահարկու է,
Գիտողի համար այս բանը.
Քանզի շատ վնասատու է,
Վատ վարքը պայծառ անուանը:

*
* *



# ՏԱՂ.

Ա՛ռն արարչագործութեան և մարդեղութեան Աստուծոյ:

Աստուած կամեցաւ՝ աշխարհ գոյացաւ՝ լոյսը ցոլացաւ.
Բոյն հրեշտակացաւ՝ շուտ հպարտացաւ յանդունդն անցաւ.
Հողը մարդացաւ՝ յօժէ խաբեցաւ՝ լուսոյ մերկացաւ.
Դատապարտեցաւ՝ անէծք ստացաւ՝ փառաց զրկեցաւ.
Կրեաց սուգ և ցաւ՝ խղճալի դարձաւ՝ յոյժ տրջացաւ:

Աստուած մարմնացաւ՝ սուրբ կուսէ ծնաւ՝ և մկրտեցաւ.
Ի գիւէ փորձեցաւ՝ վարդապետացաւ՝ մեռեալ յարուցաւ.
Սքանչելացաւ՝ հրէից մատնեցաւ՝ փշով պսակեցաւ.
Կարմիր զգեցաւ՝ թքեցաւ մրեցաւ՝ խիստ ապտակեցաւ.
Ձեռ մարդ դատեցաւ՝ յանցաւորեցաւ՝ ՚ի մահ վճռեցաւ:

Աստուած խաչեցաւ՝ և հայհոյեցաւ՝ լեղի արբուցաւ.
Գրեալն լցաւ՝ ընդ Հօր խօսեցաւ՝ խսկոյն մահացաւ.
Օրն նսեմացաւ՝ հիմն շարժեցաւ՝ վէմ պատառեցաւ.
՚Ի խաչէ բարձաւ՝ օրհնեալ խնկեցաւ՝ ՚ի վիմի թաղեցաւ.
Փառօք յարուցաւ՝ կանանց յայտնեցաւ՝ աշխարհ իմացաւ:

Աստուած համբարձաւ՝ յաթոռ իւր դարձաւ՝ դարտարոս հերձաւ
Դուռն չարին՝ բացաւ՝ բելեար խոցեցաւ՝ ազգ մարդկան զերծաւ.
Մութը լուսացաւ՝ յոյսը յատկացաւ՝ սեղան կանգնեցաւ.
Սէրը զօրացաւ՝ մարդը հասկացաւ՝ Քրիստոնէացաւ.
Մէյեադն ընթերցաւ քննեալ իմացաւ՝ և հաւատացաւ:

---

# ՆԵՐԲՈՂՈՒՄՆ

Նշանաւորագոյն Գաղղիոյ մեծագոյն Եւգէնիոս-Սիւ հեղինակին,
որ ասէ ,,Երբորդութեան և [illegible] [illegible] [illegible]
[illegible] ներելի է''

Ոսկելեզու Եւգէնիյ-Սիւն,
Գաղղիոյ մէկ արքային,
Ընծայում է շատ գիտութիւն,
Եւ սուրբ երկիւղ Աստուածային:

Ասելով թէ „այն Թագաւոր,
Էր յոյժ անաչառ և գթած.
Որ այսպէս արդար դատաւոր,
Չէ ստեղծել դեռևս Աստուած:"

Թէ „երբ տեսանէր աղքատին,
Բաշխէր նմա իւր վերարկուն.
Անօգնականի գանգատին,
Ականջ դնէր հեզ և արթուն:"

Թէ „մեծ և փոքրն նորա մօտ,
Էին ամէն կերպ հաւասար.
Թէ ոսկեփայլ և թէ աղօտ,
Ունէին մէկ կշիռ մէկ քար:"



Թէ „նա այս Թանգ գործերի հետ,
Էր կինամոլ և փափաշոտ.
Երբեմն լինէր ախտաժէտ,
Ջուր կոչէին զնա պագշոտ:"

Թէ „սուքա են մարմնական կիրք,
Որոյ ամէն մարդ է գերի.
Սոյն օրինակ կրեց սուրբ գիրք.
Են շտեմարան անթերի."

Թէ „լաւ գործքը այս վատ գործովք.
Ո՞նց են կարող աղտանալ.
Եթէ ոչ լայնատարած ծովք.
Չէին մարդոյ աղտն լուանալ"

Թէ „վերջապէս գոված Արքայն,
Էր մարդկանց գերակատարն.
Եւ կամ թէ նրան մի միայն.
Ծնեալ էր այն ոսկէդարն:"

Դատողութիւն հեղինակին,
Որին գովումէ Եւրոպան.
Խիղճս ձգեց վատ կրակին.
Զարհուրեցայ տարապայման:

Թէ արդեօք ո՞նց մարդն պագշոտ,
Մեր պատուական Եւգէնիյ Սիւն,
Դնումէ մարդկան շարին մօտ.
Որ է իսկ սէ, ո, հ ի ւ ն և տ ի ւ ն:

Այս տառերը խելօք մտքից,
Ծնանիլը անարգ բան է.
Նոքա Սաթայելին են կից,
Ո՛չ նրան, որ գիտնական է։

Ինչ մարդ որ իւր կրից սանձը,
Չի կարաց ձեռին պահպանել,
Նա ո՛նց է կարող իւր անձը,
Գովութեան արժանի անել։

Այս բանը պարզ հաստատում է,
Որ պատուելի բանաստեղծը.
Կամ լաւ բաները ատում է,
Կամ սիրէ սուրբ կրօնից եղծը։

Մէյեադն եմ արատաւորին,
Չեմ զովել որ հրեշտակ լինի.
Ջի մի ձայնս պարտաւորին,
Արդարութեան մուրհակ լինի։

*
* *

## ԱՌ * * * ՊԱՐՕՆՆ.

Էիր մէկ գաւառակապետ,
Յետոյ շնորհիւ քոյդ աղջկան,
Թէ և եղեր քաղաքապետ,
Միայն ես յայտնի դռնապան։



Պայծառ կոմսը տունդ գալիս,
Դու միշտ կունստիս դրանը.
Որ ընդ դստերդ խաղալիս,
Օտարք չի հասկանան բանը։

Ջի ցանկանալ այդ վիճակին,
Մարդկային ազգի զգօնը.
Թէ չի նստիս դրան տակին,
Ձեռիցդ կառնեն պաշտօնը։

Անարժանին մեծ գործ չեն տալ,
Մինչ չունենայ թանդ անդամանդ.
Այն պաշտօնից շահ չի զգալ,
Ջի է մէկ անարգանաց բանտ։

Մէյեադն եմ գիտեմ չես յօժար.
Կինըդ է եղել պատճառը,
Ո՞նց կ՚ուզէիր (չէիր յիմար)
Դու պաշտօնների թշուառը։

*
* *

## ՎԱԽՃԱՆ

## ՎԱՎԱՇ ՍԻՐՈՅ ԵՒ ԱՅԼՆ։

Ով չի սիրել քաղցր բանը,
Մինչ դատարկ չիլի գրպանը։

Մէկ բան պատմեմ ինձ պատահած,
Պիտումէ միշտ ՚ի մտի պահած.

Կայր մէկ բժիշկ հմուտ ուսեալ,
Գիտութեանց մէջ տարակուսեալ։

Որ հիւանդին որ նա տեսնէր.
Ցաւը կանցանէր զետ ստուէր։

Բժշկելէր էնքան ցաւեր,
Որքան իւր գլխին չունէր հեր։

Մէկ օր ասաց արդեօք ընդէր,
Ընդ նազելեաց չառնեմ ես սէր։

Որ է գլուխ վայելչութեանց,
Եւ պսակ ամեն յանկութեանց։

Որով անխոնջ զբաղեալ կան,
Իշխանաւորք ազգի մարդկան։

Յոյս դնելով զԱփրոդիտէն,
Անկաւ սիրոյ գործոց ետքէն։

Որտեղ տեսաւ կամար ունքեր,
Երկար ծամեր սև սև աչքեր։

Փայլուն ճակատ կարմիր թուշեր,
Համեղ լեզու մարմար ծրծեր։

Նրանց երամից մօտեցաւ,
Չի մտածեց ախտ զոյ թէ ցաւ։



Վասն զի ինքը բժիշկ էր,
Ինչ ցաւ լինէր կու բժշկէր։

Նախ կամեց գիտուն խօսքերով,
Արագ ոտներով ձեռքերով։

Սիրուններրի սիրտը գրաւել,
Իրան սիրահար համբաւել։

Երբ տեսաւ նոքա առանց փող,
Չեն ձգում աչքը անարգ հող։

Դրամոց պահարանը բացաւ,
Տուաւ նրանց աղքատացաւ։

Մինչ էհաս նա իւր բաղձանաց
Եղկելոյ մէջ շունչ չի մնաց։

Նա՛ որ միշտ բժշկէր զայլս,
. . . . . . . . . . . .

Եղեալ է մէկ կեղծ ճգնաւոր,
Հեզ ոչխար գայլի պոչաւոր։

*
* *

# ԵԶՐԱՓԱԿՈՒԹԻՒՆ.

Մահմետականք միշտ անդադար,
Հայերին կու դատեն արդար։

3696
47
ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ Арм.ССР

Թէ նոյա կարծեաց վերջինը,
Ի ընտիրներու թանգագինը։

Իսկ եթէ վերջինը չի լինէր,
Հայը աշխարհին կու տիրէր։

Ըստ ձայնի Աւետարանին,
Եւ Դաւթի սաղմոսարանին։

Անառակը թէ և գիտուն,
Սէյեա՛դ. է անբան անասուն։

* * *

## ՏԵՍՈՒԹԻՒՆ ԸՆԴ ԲԱՂԴԻ.

Բաղնեաց մէջ մէկ օր՝ բաղդը գիս ետես,
Նստած ջրումը՝ ինքս մերկացած,
Այս ոսկին առ՛, քեզ եմ տալիս ես,
Փեշըդ բաց արա՛ ասաց բարկացած։

Շատ ժամանակ է՝ յինէն անգոհ ես,
Թէ բաղդը երբէք՝ ինձի չէ նայում.
Եդ ծոյլ երեսիդ՝ ո՛նց հայեմ ա՛հ ես,
Որ իմ խղճմտանքիս՝ ես երկրայում։

Յիսուն տարի է՝ մօրից ծնուած ես,
Մէկ օր քեզ աշխատելիս՝ չեմ տեսել.
Ամէն օր կողկիդ՝ վերայ ընկած ես
Ինդուր է որ քեզ՝ չեմ սիրում ես էլ։



Այսօր լուեալ եմ՝ քոյդ սրտառուչ ձայն,
Առեալ քեզ համար՝ բերի այս ոսկին.
Մի յետաձգիր՝ գիս աստ ընդունայն,
Փեշըդ բա՛ց արա՝ լսիր իմ խօսքին։

Պատասխանեցի՝ տեսնում ես աստ ես,
Նորածնի պէս մերկ՝ ջրում նստած եմ.
Իմ դրութեանս՝ լաւ մտիկ տո՛ւր տե՛ս,
Փեշը ո՞րտեղից՝ ճարեմ որ բացեմ։

Եթէ կըսպասես՝ մինչեւ՚ի որ ես,
Գնամ հանդերձս՝ առնեմ գամ մօտդ,
Իմ պաղատանս՝ ընդունել պիտես,
Կարօտ եմ լիզել՝ պիտեմ սուրբ ոտդ։

Հանդերձարանը՝ աստի հինգ քայլ է,
Փորձեա՛ տե՛ս թէ ես՝ ուղիղ եմ թէ սուտ.
Աստ լինողներին՝ տեսոյդ զմայլէ,
Մինչ ես կատարեմ՝ կարճարօտ ելումուտ։

Թուայ հանդերձս՝ առի դարձայ յետ,
Տեսի բաղդն անդ չէ ուր ես թողի.
Ձայնեցի ասի՝ ո՞վ բաղդ սրտագէտ,
Ն՛կ մի ժառանգիր՝ անուն խաբողի։

Յիսուն ամաց մէջ՝ մէկ երեւեցար,
Կամելով առնել՝ խեղճիս բարեբաղդ.
Խօսքիդ դու կատար՝ տալ չի կամեցար,
Թողեր գիս անյոյս՝ ինքդ ելեր գաղտ։

Աննման ձայն եհաս՝ որ ասէր այսպէս,
,,Նրան կու սիրեմ՝ որ միշտ է պատրաստ.
Մարդոյ մօտ երկար՝ ո՞նց կու մնամ ես,
Որ բոլոր աշխարհին՝ եմ ես նպաստ։‘‘

,,Թէ ամեն տեղ ես՝ մէկ րոպէ մնամ,
Աշխարհ ինձ վերայ՝ բողոք կըբառնայ.
Աստուծոյ ես ի՞նչ՝ պատասխան կըտամ.
Որ բարկութիւնը՝ ինձանից դառնայ։‘‘

Մէյեա՛դ ահա՛ քեզ՝ մէկ բարի խրատ,
,,Եթէ կատարես՝ կըլինիս բաղդաւոր.
Այլոց ետքից մի՛ խօսիլ երբէք վատ.
Մարդ մարդոյ գովելին է պարտաւոր։‘‘

*
* *

## ԵՐԳ.

՚Ի պատիւ * * * * իշխանուհւոյն ասացեալ։

Աստուած հանգիստ ճանապարհ տայ՝ տեղ հասնի բարաւ(*) խանումը.
Չըկարծէք թէ մենակ գնաց՝ շատ հոգիք տարաւ խանումը.
Անունը իշխանական՝ փառօք զարդարաւ խանումը,
Շամախեցւոց մօտին զմեզ՝ սև երես չարաւ խանումը։

Իշխանութեան պատուին արժան՝ էլ մէկ պակաս բան չի թողեց
Ղարաբաղցւոց Շամախեցւոց մօտին պարտական՝ չի թողեց.
Պասքելոց սիրտը՝ զովացոյց՝ ծարաւոյ նշան չի թողեց,
Հարիւր մանէթի բամբակը՝ ծախեց հազարաւ խանումը։

(*) Բարաւ բառը Ղարաբաղու հայք՝ փոխանակ բարեաւ բառին են ՚ի գործ դնում։



Երևի որ իրանց տեղն՝ լաւ չէին կըզել բամբակըն.
Որ առաւ Շամախի երեր՝ քսան մանեթով մէկ հակըն.
Սևը վաճառականք առին՝ իշխանաց տուաւ սիպտակն.
Միայն ասումեն կշըռեց՝ յուժ թեթև քարաւ խանումը։

Մաղը խեմքին շունը շեմքին՝ իմաստնոց ասաց առակ է.
Լաւ ինսանը ո՞նց կըմտնի՝ էն տունը որ խայտառակ է.
Յայտնի գիտենք որ խանումի՝ ըսկեսուրը անառակ է.
Չի գիտեմ նորա հարսնութեան՝ ինչպէս յօժարաւ խանումը։

*
* *

## ԱՆԿԵՂԾ ԵՒ ԿԵՂԾԱՒՈՐ.

Մէկ օր մէկ անկեղծ՝ և մէկ կեղծաւոր,
Ցանկացան իւրեանց՝ բնութիւնը պատմել.
Մէկ բարի ծեր գտին՝ նոքա դատաւոր.
Որ տեսնեն նա որի՞ն՝ կու կամի յարգել։

Անկեղծը ասաց ես՝ ամեն առարկին,
Էնպէս եմ տեսանում՝ ինչպէս որ նա կայ.
Մարդոյն մարդ կը կոչեմ՝ կինարմատին կին,
Կուրին կոյր, կաղին կաղ՝, ռակային ռակայ։

Վատ մարդոյն չեմ գովիլ՝ թէ լինի թագաւոր.
Որ մոլթեն պակասը երեսին կա՛սեմ.
Վատ մարդը թէ հազար՝ լինի երախտաւոր.
Նրանից ես ո՞նց լաւութիւն կսպասեմ։

Ցիմարի խորհրդին՝ ես լաւ չեմ ասել,
Թէ և նա պաշտօնիւ՝ լինի նախարար.
Նրան ես իմաստնոց՝ շարին չեմ դասել,
Թէ դասեմ իմ խիղճս՝ կայրի անդադար։

Ագռաւին ո՞նց կարեմ՝ կոչել քաղցրաձայն,
Ցգեղին ո՞նց ասեմ՝ թէ հրաշագեղ ես.
Ճլատին ո՞նց ասեմ՝ թէ սիրտդ է լայն,
Կծուծին ո՞նց ասեմ՝ ազնուի ցեղ ես։

Կաշառակեր մարդկանց՝ ո՞նց ասեմ ես լաւ,
Այն մասին որ նա ինձ՝ սիրով է հայում.
Վատ մարդը ունենալ՝ պիտի վատ համբաւ,
Ինչպէս որ օրինաց՝ գիրքն է վկայում։

Ուրուրին ես ի՞նչպէս՝ անուանեմ բազէ,
Կաչաղակին ո՞նց՝ կոչեմ սիրամարգ.
Մկան մորթուն էր՝ ասեմ սա խազէ,
Կարգինը կարգին է՝ անարգը անարգ։

Պագշոտին ես ի՞նչպէս՝ սրբակաց ասեմ,
Ագահին ես ո՞նց կոչեմ՝ աղբիւր բարութեան.
Չարի գլխոյ վերայ՝ ես ի՞նչու լաց կասեմ,
Բարութեան պատիւը՝ էր տամ չարութեան։

Ես տխմար հարստին՝ գիտուն չեմ ասիլ,
Թէ և ես նրանից՝ շատ շահ ունենամ,
Ցխմարը իւր վարուք՝ է իսկ բաբասիլ,(*)
Էնպիսի չար ցաւով՝ ի՞նչու մահ ունենամ։

(*) Բաբասիլ կամ բաբասել, է ցաւ որ Ռուսերէն Гиморой կոչուի։



. . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . .

Ձառաքինին աւել՝ կուզեմ յեղբօր է,
Կը պատվեմ ես հոգւով՝ նրան յարաժամ։

Սա է աճ իմ՝ բնական բարքս,
Չեմ կարող փոփոխվիլ՝ թէ որ սպանեն.
Մինչ ցմահ չեմ թողուլ՝ ձեռից իմ վարքս,
Կը՝ երկնչիմ ես ահեղ՝ սուրբ դատաստանէն։

Կեղծաւորը ասաց՝ արհեստ եմ արել,
Որ երբեք բերնիցս՝ կոշտ բառ չի հանեմ.
Ոչովին խօսքերով՝ չեմ վիրաւորել,
Ամենին ինձ համար՝ բարեկամ կանեմ։

Փառասիրաց մօտին՝ կուզովեմ գաշխարհ,
Ծահասէր մարդոյ մօտ՝ կըխօսեմ շահից.
Անափառին պատիւ՝ կըտամ անդադար,
Երբէք առարկայ չեմ բանալ մահից։

Մարդասպանին էր՝ ասեմ վատ մարդ է,
Որ հանեալ զուր իւր՝ կոխէ ՚ի փոր իմ.
Վատին ի՞նչու ասեմ՝ մեղաց թակարդ է,
Լաւն էնէ տեսնելիս՝ սիրով յայգորիմ։

Եթէ որ ագռաւին՝ ասեմ սոխակ ես,
Արդեօք յինէն ի՛նչ՝ պիտի պակասէ.
Կամ թէ բու թռչունին՝ ասեմ դարյակ ես,
Քաղցր խօսքերին՝ ո՞վ ոք վատ կասէ։

Կուրի մօտ Է՞ր պիտի՝ ես խօսեմ կուրից,
Խուլի մօտ ինչո՞ւ գործ՝ կածեմ խուլ բառը.
Լաւ բառը համեղ է՝ լաւ կերակուրից,
Կոշտ բառը իժ օձի՝ թոյնից է դառը։

Պագշոտին ամեն ոք՝ գիտէ պագշոտ է,
Արուագէտ մարդը՝ թագնըվիլ չէ կարող.
Ե՞ր պիտի ես ասեմ՝ սա վավաշոտ է,
Որ գնեն անունս՝ չար նիւթ սերմանող։

Յիմարին կասեմ դու՝ փիլիսոփայ ես,
Տգեղին գեղեցիկ Յովսէփ կանվանեմ.
Պառաւին կասեմ դու՝ դեռ երեխայ ես,
Նրանց ես ինձանից՝ Էր անգոհ անեմ։

Կէս օրին թէ հարուստն՝ ասէ գիշեր է,
Նոյն ժամայն ես կասեմ՝ ահա՛ քեզ լուսին.
Թէ լոին ասէ նա՝ մեծ ուժոյ տէր է,
Կասեմ նա կյաղթէ՝ ընձուց երկուսին։

Ով որ բան խօսէ՝ կասեմ այդպէս է,
Ի՞նչ փոյթ է որ նորա՝ խօսքին ներհակեմ.
Ինչ վատ գործ տեսանեմ՝ կասեմ լաւ ծէս է,
Ե՞ր պիտի անպատճառ՝ մարդոյ սիրտ ծակեմ։

Սա է իմ բնութիւնս՝ որով մինչ ցայսօր,
Ամենայն կողմանէ՝ ստացելեմ շահ.
Նրան ես չեմ փոխել՝ ո՛չ հօր, ո՛չ եղբօր,
Յարգանօք պիտում է՝ կատարեմ ցմահ։



Սուրբ ծերը երկուսի՝ խօսքերը լուեալ,
Սկսեց խոր մտօք՝ ճշտութեամբ դատել,
Երկոցունց արժանի՝ իրաւունք տուեալ,
Վերջապէս սկսաւ՝ նա վճռահատել։

Անկեղծին ասաց ,,քոյ անկեղծութեամբդ,
Մարդկային յանցանաց՝ բացայայտիչ ես.
Բայց ասեմ որ դու այդ՝ թանգ բնութեամբդ,
Ամենայն արատութեան հալածիչ ես։‘‘

,,Մինչ ցմահ ոչ ոք քեզ՝ քաղցր չի նայիլ,
կեանքդ անց կուկենայ՝ ա՛հով և վա՛հով.
Թէ այրեն քեզ հրով՝ ոչ ոք չի խնայիլ,
Վատ օրիդ կուխնդան՝ ծափով ղա՛հղա՛հով։‘‘

,,Բայց քո լաւ վիճակդ՝ Աստուծոյ մօտ է,
Անդ պիտի հասանիս՝ դու երանութեան.
Աշխարհիս պատիւը՝ մէկ դատարկ օդ է,
Զոր սիրէ մարդկային՝ բնութիւնն անբան։‘‘

Կեղծաւորին ասաց՝ ,,Աշխարհասէր ես,
Խեղճ հոգիդ չար մարմնոյդ՝ ձեռին գերի է,
Դու մարդ ես բայց գործով՝ դևի պատկեր ես,
Դևին թէ լաւ փորձեն՝ քեզնից թէրի է։‘‘

,,Արտիցդ հանելես՝ Աստուծոյ սէրն,
Կամելով հաճելի՝ լինել աշխարհին.
Իմացի՛ր կեղծաւոր՝ որ քոյ գործերն,
Հրեշտակաց անարժան՝ են արժան չարին։‘‘

„Էն մարդկանց որ այդքան՝ ջերմ հաճելի ես,
Ձե՛ս գիտում որ նոքա՛ քոյ պէս սնոտի են.
Վա՜յ քեզ որ Աստուծոյ՝ մօտ ատելի ես,
Մարդկանց մօտ սիրելի՝ որք անարգ դի են":

Յետոյ դարձաւ առիս՝ ասաց ինձ „Սէյեադ,
Աստուծոյ պատիւը՝ դու մարդոյ մի՛ տալ.
Աստուծոյ պարգևն է՝ անվախճան և շատ,
Իսկ մարդոյ պարգևն է՝ հողածին մետալ": (*)

*
* *

## ՀԱՐԻՒՐԵՐՐՈՐԴ ՍԱՂՄՈՍ ԴԱՒԹԻ.

1. Ողորմութեան և իրաւանց՝ միջին գքեզ կօ՛րհնեմ ո՛վ Տէր,
Սաղմոս կասեմ ես սուրբ սրտիւ՝ ընդ նմին կա՛նեմ և մտքեր։

2. Մինչի անբիծ ճանապարհը՝ եկեալ կը՛հասանէր առիս,
Անբիծ կը՛վարվէի տանըս՝ գոլով ընդ անբծութեան սէր։

3. Աչքիս առաջին չ՛եդի ես՝ անիրաւ առարկաները,
Ատեցի նրան յաւիտեան՝ որ զանօրէնութիւն անէր։

4. Ծուռ սիրտ ունեցող մարդիքը՝ երբէք ինձնից չի մօտեցան,
Անզգամի հեռանալը՝ ամենևին ինձի փոյթ չէր։

5. Ինձանից ես էն մարդին՝ բաց է ՚ի բաց հալածեցի,
Ով ոք որ ծածուկ իրան՝ ընկերիցը կ՚բամբասէր։

(*) Մետալ բառը Ռուսաց լեզուի բառ է և փոխանակ մետաղ բառի եղեալ է աստ։



6. Ես այնպէս մարդոյ հետը՝ ամենևին հաց չի կերայ,
Ում որ սիրտը ագահ էր՝ և աչքով ամբարտաւան էր։

7. Աչքս միշտ էս աշխարհիս՝ հաւատացելոյն էր հայում,
Վասն զի կամում էի՝ որ նա միայն ընդիս նստէր։

8. Ինչ մարդ որ գնում էր՝ անբծութեան ճանապարհաւ,
Այնպիսի մարդն է որ՝ յամենայն ժամ զիս կը պաշտէր։

9. Իմ տանըս չէր բնակվիլ՝ երբէք անբարտաւան մարդը,
Անիրաւութեան տէրը՝ իմ աչքումը յաջողակ չէր։

10. Երկրի մեղաւորներին՝ առաւօտն էի սպանում,
Որ սատակին չի մնան՝ Տէրի քաղաքումը անօրէններ։

Սէյեա՛դ ի՞նչու պիտի դու՝ սաղմոսը ոտանաւոր շինես,
Դու անսուրբ աշխարհական ես ո՞չ թէ սրբագործ տէրտէր։

*
* *

## ԵՐԳ.

Ըստ Էլմաղլի Օսմաներէն „Շարքի հանգի" ասած երգոյն:

Աղջի՛կ քոյ սէրդ, սև սև մազերդ,
Թակարդ ձգեց զիս՝ կամար ունքերըդ.
Կարմիր թուշերդ, չալչալ աչքերըդ,
Սիրտս ծակեց սուր թերթևունքերդ։

Մէջքդ բարակ, անդամդ կարաք,
Ինքդ բարեմիտ՝ իբրև պատարագ.
Մարդ չես հասարակ, ծաղկեալ ագարակ,
Գլուխ մարգարիտ՝ են ակռիքներդ։

Հաւատոյ ճառ ես, Հրեղէն կառ ես,
Ձեմ տեսած քոյ պէս՝ քաղցրաբարբառ ես.
Պտղատու ծառ ես, լուսնից պայծառ ես,
Թռաշ եաղութ է՝ ալ պռօշներդ։

Մէկ խօսի՛ր ընդիս, որ խնդայ հոգիս,
Բաւ է շատ երկար՝ մի՛ չարչարիլ զիս.
Մեռայ խղճալիս, սգումեմ լալիս,
Որ մէկ ցոյց տաս ինձ՝ բամբակ ծծերդ։

Գլխովին սէր ես, քաշած պատկեր ես,
Երևումէ որ՝ մեծ պատւոյ տէր ես.
Հմտութեամբ ծեր ես, պիտի համբերես,
Որ գայ աշխարհը՝ լիզէ ոտներդ։

Ինքդ անգին քար, թագ մարգարտաշար,
Տեսոյդ կարօտիւ՝ անկեալ գամ տկար.
Ասենք էլ վատթար, զիս վիճակ ձգար,
Ես որ մեռանեմ՝ ի՞նչ կուլի խէրդ։

Ես մարդկանց վատն եմ, Նրբանկատն եմ,
Սիրահարների՝ գլուխ ժլատն եմ,
Ես քոյ Սէյեադն եմ, քեզ ո՞նց կըվատնեմ,
Թէ մէկ վզովս՝ ձգես կռներդ։

*
* *



# ԵՐԳ.

Մի՛ այնքան քաղցր լինի՛ր որ կլանեն.
Մի՛ այնքան դառն լինի՛ր որ թքանեն։

Քաղցրութեան սաստիկը՝ միտք կըպղտորէ.
Դառնութեան սաստիկը սիրտ կը կըտորէ.
Կծութեան սաստիկը՝ հին ցաւ կը նորէ.
Հետևմունք սաստկութեանց՝ գաժանական են։
Մի՛ այնքան եայլն։

Մեծ կործանումն ունի՝ շատ բարձրացածը.
Ե՞ր պիտի երկնչի՝ ցած տեղ կանգնածը.
Խոնարհաց պաշտպանն է՝ նոցա Աստուածը.
Բարութեան պտուղքը՝ անմահական են։
Մի՛ այնքան եայլն.

Քարոտ ճամբէն լաւ է՝ քան շոգենաւն.
Վնաս չի տալ՝ կերակուրի սակաւն։
Երկիւղից մերձ է միշտ մեծահամբաւն.
Կարգից դուրս բաները՝ կորստական են։
Մի՛ այնքան եայլն.

Սաստիկ սիրոյ վերջը՝ ատելութիւնն է.
Ժիրութեան թշնամին վատ ծուլութիւնն է.
Շաղփաղփի պատիժը՝ իսկ խլութիւնն է.
Աշխարհի գործերը՝ հակասական են։
Մի՛ այնքան եայլն։

Մէյեմ֊դ դու ո՛չ քաղցր ես՝ և ո՛չ յոյժ դառն.
Ո՛չ գիշատող գայլ ես՝ և ո՛չ հեզ գառն.
Ո՛չ ցուրտ ձմեռն ես ո՛չ սաստիկ ամառն.
Քոյ ամէն ընթացքդ կանոնական են։
Մի՛ այնքան եայլն.

*
* *

# ԵՐԳ.

Ի դիմաց Հայաստանի առ ազգային յորդորութիւն

Ես չունիմ յոյս՝ նորոգութեան,
Ընդէր ուքնիք միտք, ձեռք, փետուրք.
Նայելով ազգիս բնութեան,
Դեռ մէջս շատ՝ կըխաղան սուրք։

Հայք իմ թողեալ՝ իւրեանց պէտքը,
Իգուր վատակին ոգէտքը,
Կոտորեցին կարապետքը,
Թշնամեաց եղեն կերակուրք։

Հայք ոխ բառը ընտրեցին,
Լաւ հողում տնկեալ ջրեցին,
Վերջապէս անուն դրեցին,
Կոչեցին հեծութեան աւուրք։

Ո՞նց անեմ այն ազգից գանգատ,
Որոյ արմատն է ի բնէ վատ,
Զեղեն նրան երբէք խրատ,
Կապանք, շղթայք, բանտք և անուրք։



Պակաս գալով նոցա սէրն,
Մոռացան նախնեաց գործերն,
Թագաւորաց անուններն,
Կարծեն թէ են սնոտի լուրք։

Ո՞ւր է ո՞ւր մնաց Տիգրանը,
Որ բարձրացոյց Հայաստանը,
Աւերելով Յունաստանը,
Եթող ազգին անթիւ ամուրք։

Արդեօք յիշէն նոքա զՏրդատ,
Որ խլեաց թշնամոյն զարմատ,
Հայոց եթող անդորր հաստատ,
Նրանց մօտ թէ նա թէ մէկ թուրք։

Հպարտութեամբ գոռոզացան,
Ընդդէմ թշնամեաց թուլացան,
Տէրութեան շահը իմացան,
Բայց չո՛ւնեցան եռանդն և տուրք։

Հայք միմեանց ոսոխ գոլով,
Անպատվեցան թքով, մրով,
Մէյեմ֊դ դատարկ սագի փետրով,
Անին չի լինիլ Պրանտենբուրգ։

*
* *

# ԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ.

1, Ափսոս դու որ քոյ մէջումդ,
Սրտացաւ չունես Հայաստան.
Շատ ցաւեր գոյ էդ սրտումդ,
Սրտասուաց տուն ես Հայաստան։

2, Զարմանալիք շատ գոյ քեզնում,
Օրդ անց է կենում մթնում,
Ոչոք քոյ ցաւդ չի տեսնում,
Փլվածոց բու (*) ես Հայաստան։

3. Ես ողբդ երգել սկսայ,
Յոմանցէ գովասանք լսայ,
Շատերին անզգայ տեսայ,
Տեսի շատ երեր ես Հայաստան։

4. Գովեցի ամեն սարերդ,
Վանքերդ և խաչաքարերդ,
Դաշտդ, անտառդ, վարերդ.
Անոխ, անքուն ես Հայաստան։

5. Որդիքդ գինս չիմացան,
Ընդիս յայտնի թշնամացան,
Բարի միտքս չի հասկացան,
Իզէ նկուն ես Հայաստան։

(*) Անուն բու, Թուչնոյն է աստ նշանակում։



6. Ընչո՞ւ է քոյ օդդ դառն,
Որ քեզնից փախնում է գառն,
Որդւոցդ բարքն է յոյժ խառն,
Թշուառ անուն ես Հայաստան։

7. Չիմացար Սէյեադի ջանքը,
Որ քո ճամբիդ դրաւ կեանքը,
Շատ կրեց չարեաց գրկանքը.
Պատճառը դուն (*) ես Հայաստան։

* * *

# ՅԱՆԿԱՐԾԱԾԻՆ ԽՕՍՔ.

Լաւ մարդը լաւ է վատը վատ,
Թէ և ծնօղ հայրս լինի.
Վատիցը միշտ կանեմ գանգատ,
Թէ կուզենայ մայրս լինի։

Սէյեադ ընդէր արաղ գինի,
Չես խմում քեֆըդ չաղ լինի՝
Ում ոտը փոքր կաղ լինի,
Կասեմ թէ եղբայրս լինի։

* * *

(*) Դուն աստ փոխանակ դու բառի է դրած ոպէս Տփխիսեցիք են միշտ 'ի գործ դնում։

Ընծայեալ 'ի տեառն Շամախեցի հայ իշխան պ. Գէորգայ Գօգ-Ջայեանց 'ի Հէրայ Երկուց իւրոց Միքայէլի և Ջիմշիտի, 'ի միում եօթնէքի մահուանց:

18$^{7}_{9}$59 'ի Շամախի:

Ո՞վ իմ ճուխտ տատրակի նախշուն ծագերըս . . . .
Արդեօք դուք ինչո՞ւ,
Արտասուօք այրեցիք եղուկ աչքերըս . . . . . . .
Արարիք գիս բու,
Սռանց ձեզ ո՞նց դատար կը գտնի սէրըս. . . . . .
Զի է յոյժ աղդու,
Գուլթ չկայ սրտումդ անողորմ օրհաս. . . . . . .
Որ ցաւս զգաս,
Քեզ տեսնեմ որ դու էլ ինձ պէս ցաւի գաս. . . ,
Յաւիտեան ողբաս:

Ես ո՞րպէս դեղ դնեմ երկու խիստ վէրաց . . . .
Նեղ ժամանակիս,
Ո՞նց կարեմ ժուժկալել դժնդակ իրաց. . . . . . .
Այս ծեր հասակիս,
Բաղդը միշտ Թշնամի է մարդասիրաց . . . . . . .
Մուր քսեց Թագիս,
Գուլթ չկայ սրտումըդ և այլն.

Տարժը քանդեցամեն շինուածս տունս . . . . . .
Զգեց պարտուց տակ,
Մահը իմ ձեռիցս խլեց Թռռունս . . . . . . . . . .
Իբրև աւազակ,



Կոտրվեց աշխարհիս մէջ իմ անունս. . . . . . . . .
Եղէ մէկ կատակ.
Գուլթ չըկայ սրտումըդ ևայլն:

Մէկ Թռռնս կոչվում էր անուամբ Միքայէլ. . . .
Իսկ միւսը Ջիմշիտ,
Թէ դևը տեսանէր կուզեր անխայէլ. . . . . . .
Որքան լինէր գիտ,(*)
Ինչպէս դիփ Շամախին կարէ վկայել . . . . . . .
Թ,էին նախշուն ծիտ,
Գուլթ չկայ սրտումըդ ևայլն:

Ա՞րդեօք ո՞ր մարմնաւորն էր անիծել գիս . . . . .
Կամ ո՞ր վարդապետ,
Որ եօթը օրվայ մէջ էս անբաղդ սրտիս . . . . .
Կպաւ երկու նետ,
Կեռացաւ մէջքիցը անդրանիկ որդիս (**) . . . . .
Եղև ախտաժէտ,
Գուլթ չըկայ սրտումդ ևայլն:

Վա՛յ ինձ որ հրեշտակը ճանաչեց դուռնս . . . .
Էլ ձեռք չի քաշիլ,
Նակսէ փշրել իմ զօրաւոր կուռնս. . . . . . . .
Եւ կեանքս մաշիլ,

---

(*) Զիտ, այսինքն՝ ներհակ կամ Թշնամի է նշանակում.

(**) Պ. Գէորգայ անդրանիկ որդին Յակոբ աղան է երեսուն և հինգ ամսոց, և հանդուցեալքն սորա որդիքն են.

Կկտրէ ծառս և կցրուէ նուռնս . . . . . . . . . .
Պիտեմ վաշվաշել.
Գութ չկայ սրտումդ եայլն։

Սէյեադ ճուխտ մեռելոյն այս ողբը բաւ չէ. . .
Չի մեծ կորուստ է,
Կը գնայ յաւիտեան փոքր համբաւ չէ . . . . . .
Անմաշ հագուստ է,
Այս բանը գիտողին երբէք սակաւ չէ. . . . . . .
Չի է վերուստ է.
Գութ չկայ սրտումդ եայլն.

*
* *

# ԱՌ ԼԵՌՈՒՆ ԿՈՎԿԱՍ.

'Ի 18$\frac{25}{9}$59 'ի Շամախի։

Կովկաս շատ էիր պարծենում քոյ ամպաչու գլխով,
Իշխան Բարատինսկին կորացոյց գնա մեծ խելքով։

Երբեմն էիր ահ, դող և սարսափ շատ աշխարհաց,
Քոյ որդիքդ շատ ընտանեաց կեանքը արին լաց,
Ըստ պատմութեանց ոչոք քեզ նուաճել չի կարաց.
Ո՛չ Հռոմք, ո՛չ Յոյնք, ո՛չ պարսիկք, ո՛չ ազգն Թաթարաց,
Ով քոյ մէջդ ուրախ մտաւ ելաւ մեծ սգով։
Կովկաս շատ էիր եայլն։



Ապաւինեալ մեծ բանաստեղծ Հաֆիզի վիճակին,
Բաջամարտիկ Նադիր-Շահը էառ Այմաքին (*),
Այն տեղն եհաս, որ անդ եթող իւր տակի ձին,
Շատ թագադիրք միջիցըդ ըստ Նադրի տեսակին,
Հեդխոտն են փախել և զայրացեալ հոգւով։
Կովկաս շատ էիր եայլն։

Երկար նեղեցեր դու Հայաստանին, Վրաստանին,
Գերի վարելով շատ մեծատանց մերձն ու ընտանին,
Կողոպտեցեր չի նայելով թանգին էժանին,
Վերջը կամեցար փոքր ինչ խաղալ ընդ Ռուսաստանին,
Չիմացար որ դու կաթիլ ես նա անսահման ծով։
Կովկաս շատ էիր եայլն։

Խաղ առնելըդ ընդ հրաշափառ Ռուսաց Տէրութեան,
Եր իսկ և իսկ ապացոյց քոյդ մտաց թերութեան,
Ինչքան արիր որ կտրվաւ լարն համբերութեան.
Երևի սրտումդ չկար բաղձանք սէրութեան,
Որ որդւոցդ արարքն էր ամենավրդով։
Կովկաս շատ էիր եայլն։

Շատ կուսակալք և փոխարքայք զքեզ փորձեցին,
Բարձրութիւնդ տեսեալ քեզ անառիկ կարծեցին,
Վասնորոյ քոյ սերունդքդ միշտ չարն արծարծեցին,
Իրանց համար յոտար ազգաց պաշտպանք վարձեցին,
Որ կարենան ընդիմանալ Ռուսաց նորանցով։
Կովկաս շատ էիր եայլն։

---

(*) Այմաքին է Ջանիկութայի խանութեան մէկ գիւղն, որ համարեա՛ թէ է ձոր մի շրջապատեալ ամենայն կողմանց ահագին լերամբք։ Աստ Նադիր-շահն Պարսից պարտեալ 'ի լեռնականաց, Հեդխոտն փախեաւ, թողեալ անդ գերեխլոր իւր ականակուռ թամբիւ և զարդիւք։

Դու ո՛չ երկիւղ ընդ միտ ածեր և ո՛չ զինուց ձայն,
Ամրութեանդ յոյս կապելով օրդ էանց ունայն,
Ցիշեալ Վէհազնեից միջէն չորս հոգիք միայն,
Պատերազմեցին ընդ քեզ ո՛չ նեղ և ո՛չ լայն,
Երմօլօվ, Բարօն-Ռօզէն, Ղօլօվին, Վօրօնցով։
Կո՛վկաս շատ էիր եայլն։

Նրանց ամենի ձևն էր թէև գերազանց,
Բայց քոյ մթութեան աղագաւ անպտուղ է անց,
Ոչ քեզ կալան ոչ կարացին բերնիդ դնել սանձ,
Քանզի այլ կերպ էր սահմանաց այս բան 'ի բարձանց,
Որ դու պիտի ճմլիս „Աղէքսանդր“ անունով։
Կո՛վկաս շատ էիր եայլն։

Տէրն այս անուան մեր կայսրն է և իւր Փոխարքայն,
Որք զթութեամբ հրաւիրեցին զքեզ մեղմաձայն,
Բառնալ 'ի միջոյ կսկծալի մահն, լացն և վա՜յն,
Գալ առ լոյսն մոռանալով խաւարն ընդունայն,
Ամեն ազգաց հետն վարիլ սիրով և պատվով։
Կո՛վկաս շատ էիր եայլն։

Դու լսելով նոցա ձայնը սխալ խորհիլն,
Տեսեալ Ռուսաց զութն և քոյ խիստ նուաղիլն,
Վճռողաբար պատանդ ետուր քոյ սուրբ (*) Շամիլն,
Աչօք տեսեր փոխարքայէն նորա յարգիլն,
Որ փրկեցաւ չար մահուանէ իւր տնով, տեղով։
Կո՛վկաս շատ էիր եայլն։

---

*) Սուրբ վանն այնը կոչի, զի մեծ անդական (խմամ ուլ ադամ) է սոտ մարդաբերին։



Ե՛կ քոյ լեզուաւ խոստովանիր ասա ո՞րն է լաւ,
Հանգստութի՞ւն թէ անդադար մարտ, կռիւ և դաւ,
Շատ ազգերի վառ ճրագը ռազմիւ շիջաւ,
Խռովարար մարդոյ կեանքն է քայքայեցեալ նաւ,
Որ անպատճառ կը կործնի մէկ փոքրիկ հողմով։
Կո՛վկաս շատ էիր և այլն։

Այսուհետև ամեն ուրեք չերևիլ զրկանք,
Հանգիստ կուլի ամեն մարդոյ սիրտ և խղճմտանք,
Ով որ մարդ է՝ Բարատինսկուն կը կամի՝ երկար կեանք,
Որ նա մարդկան՝ ազգի շահուն՝ չի խնայեց ջանք,
Մէյեա՛դ դու էլ՝ մաղթեա նմա՝ զայն հոգւով սրբով։
Կո՛վկաս շատ էիր և այլն։

*
* *

# ՈՂԲ.

Ի տխմաց Սուրբ Կոստեն տա Մեխաջեն Որդեն եռր։

Ո՞վ իմ կենսատու Արեգակ,
Ընդէ՞ր մտար սև ամպոյ տակ,
Գ՚լխիդ եդին փշեղէն պսակ,
Վա՜յ ինձ որդեա՜կ վա՜յ ինձ որդեա՜կ։

Ո՞վ իմ անթառամ մանուշակ,
Մարդկան ազատութեան գուշակ,
Խաչեցին քեզ գետ աւազակ,
Վա՜յ ինձ որդեա՜կ վա՜յ ինձ որդեա՜կ։

Ո՞վ իմ Եդեմական Թութակ,
Անմահական ջրոյ վտակ,
Աստուածդ ընկալար ապտակ,
Վա՜յ ինձ որդեա՜կ վա՜յ ինձ որդեակ։

Ո՞վ իմ Հրաշաբարբառ Սոխակ,
Ո՞ւր է քոյդ սրտառուչ Նուագ,
Առանց քեզ ապրիմ ի՞նչ գունակ,
Վա՜յ ինձ որդեա՜կ վա՜յ ինձ որդեա՜կ։

Սէյեադը ո՞նց չի առնէ կազ,
Ո՞վ իմ մարգարտեայ անգին Թագ,
Պատմուճանիդ արկին վիճակ,
Վա՜յ ինձ որդեա՜կ վա՜յ ինձ որդեա՜կ։

*
* *

## ՀԱՏՈՒՑՈՒՄՆ.

Գործն ու վարձը մէկ մէկու՝ կռնէն բռնած են ման գալիս,
Ամէն մարդոյ իւր գործոյ՝ հատուցումն է Աստուած տալիս,
Մարդասպանին կախաղան՝ գողերին մշտական աքսոր,
Պագշոտը ծեծ է ուտում՝ խաբեբան բանդն է մնալիս,
Ձեղխի մէկ վարձը ախտն է՝ և միւսը թշուառ մահը,
Սէյեադն եմ այս բաները՝ ես իմ աչօք եմ տեսնալիս։

* *
*



### ՅԱՆԿԱՐԾԱԽՕՍ ԲԱՆ.

Գիտեմ որ ասելու են՝ թէ Սէյեադը շատ է խօսում,
Իմ խօսիլս չէ զարմանք՝ իրանց չի լսիլն է յանցանք,
Մեր նախնեաց համար ես՝ շատ էին խրատ ասում,
Նոքա էլ չի լսեցին, որ մենք այս վիճակն ստացանք։

„ՍԷՅԵԱԴ։“

* *
*

## ՆՈՐԱՁԵՒ ԵՐԳ.

Ի՞նչ զրկանք է, ի՞նչ չարչարանք, ի՞նչ տանջանք,
Ի՞նչ ցակուլթիւն, ի՞նչ աշխատանք, ի՞նչ զուր ջանք,
Համեմատեալ ընդ սնոտեաց աշխարհիս,
Սոքա միայն են հոգեկան ստգտանք.

Մարդ 'ի բնէ բանական,
Գործ է նա միշտ գործ անբան,
Ինքը գոլով կարճակեաց,
Խորհէ զխորհուրդ անսահման.

Ձէտ խոնաւ ամպ,
Օդոյ բաղխմամբ,
Ահ տայ մարդոյ-
Որոտմամբ։

Հնչէ հողմը, վանէ և առնէ անյայտ,
Խեղճ ստեղծուած, թող սա լինի քոյ վկայդ,
Բանական ես, դիւրաւ պիտի հասկանաս,
Զի ո՛չ քար ես, ո՛չ ջուր, ո՛չ հուր և ո՛չ փայտ.

Ահա՛ քեզ պարզ օրինակ,
Սովորի՛ր լե՛ր ընդունակ,
Ամեն ստեղծուած ունի,
Յաշխարհիս մէջ մէկ վիճակ.

Որ է յոյժ նեղ,
Ժպիրհ, տգեղ,
Անփորձ անձանց-
Մահատեղ։

Այս հին աշխարհ, բնութեամբ չար անգադար,
Շատ հրաշալի, գործ է ածել 'ի կատար,
Պատմեմ տեսնեմ, ի՞նչ եղեն քոյ նախնիքդ,
Դու այսպիսի թշնամւոյն ո՞նց հաւատար.

Անյագ արիւն արբու է,
Աչքը, ունքը, թըլթու է,
Շատ տէրութիւնք աւերեց,
Աւերակասէր բու է.

Կեանքդ է օր,
Կամ թէ կէս օր,
Սա հին կարգ է-
Ոչ թէ նոր։



Հզօր կայսերք, իբրև ստուերք, վերացան,
Արեգակնափայլ գոլով, մթերացան.
Աշխարհային փառացը յոյս կապելով,
Թշուառացան, անասնոց ընկերացան.

Զի է գլուխ մարդախաբ,
Զարութեանցը չունին չափ,
Սիրականներին է սուտ-
Յոյս. և ատելեաց սարսափ.

Ի մեծ վտանգ,
Սրտակեր ժանգ,
Գին գնես չի
Արժիլ թանգ։

Հայաստանն՝ արար հողոյ հաւասար,
Ո՛չ վանք թողեց, ո՛չ պատ, ո՛չ բուրգ, ո՛չ հասար,
Մինչ ցարդ ոչ ոք նրան լաւ չի ճանաչում,
Այս մատնչի գործերը են միշտ խաւար.

Ցոյց կըտայ մարդոյ շատ սէր,
Որ կասէ սա հեր է մեր,
Յանկարծ կու տեսնէ իրան-
Հողն է կոխել անտէր տէր,

Զեռիցդ դա՛տ,
Կոչեց վա՛տ,
Մինչի իւր մահը-
ՍԻՅԵՍԱԴ։

* *
*

Հազար ութ հարիւր յիսուն և իննին,
Շաբաթ էր Սեպտեմբերի տասն իննին,

Որ ես գրեցի զայս խրթնամիտ բան,
Շնորհաւորելով զմուտն Աշնան։

„Մ Է Ց Ե Ա Դ"

*
* *

## ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՔ.

Նոր ուսումնական Հայերի մօտումը,
Բոլոր Հայաստանն չի արժիլ մէկ . . .,
Մէկն աչօքս տեսայ ես Շամախումը,
Որոյ գովեստն երգել եմ յոյժ շուտուց։

Ինչ ազգում որ մէկ գեղեցիկ կին տեսնեն,
Չեն նայիլ հասակի չինի և պատուի.
Բազմութիւնով ճանճի պէս կըշրջեն ետնեն,
Ով տեսնի կասէ հարսանիս է կատուի։

Իրանք թէ կուզ լինին ասպետ եներալ,
Կամ կապիտան, կամ մայօր, կամ պօլկօվնիկ,
Պատւոյ կորուստ երբէք նոքա չեն զգալ,
Կը խառնակին Հրէայ եղև թէ Տաճիկ։

Հայ անունը նրանց համար է լոկ բառ,
Քանզի չունին ոչ Հայի սիրտ ոչ հոգի.
Ծաղրի համար կը խօսին 'ի Հայ բարբառ,
Սուր միտք պիտի նրանց արարքը ջոկի։



Ստացել են կրթութիւն Եւրօպական,
Իրանց բարքը թողել են կոպիտ անտաշ,
Մոռացել են Հայոց վարքն անապական,
Մէկը супъ է մէկն щи և մեկը кашъ։

Ազգի համար իրանց պիտանութիւնն,
Թէ հարկաւոր լինի յոյժ պինդ կը գաղեն.
Մկներն իրանց պիղծ ապականութիւնն,
Դեղ կարծելով մարդոյ, շատ խոր կը թաղեն։

. . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . .

Վասն իրանց հայրենեաց վնաս բանին,
Քուրձ են զգենում աղաղակումեն լալիս։

Նրանց ճանաչելոյ նշանը սա է,
Կամ ակնոց են կրում կամ տգեղ մօրուս.
Այս նշանքը երբ տեսնէք ասեք դա է,
Որ ոչ Հայ է ոչ Նեմեց և ոչ Ռուս։

Հայի մօտին այլազգից գանգատ կանեն,
Թէ նրանց մօտ Հայ ազգը պատիւ չունի.
Այլազգեաց մօտին Հայերին կը այպանեն,
Կասեն թէ հայք պատճէն են անասունի։

Մէկ որդի որ իւր հօրը չի ճանաչէ,
Նա հայրենեաց պատիւը ի՞նչ կ'իմանայ.
Որ տեսնելիս նորա վատ օրն ամաչէ,
Հայրենիքը նորա համար զուր բանա։

Մէկ սև փողով առնող լինի կը ծախեն,
Հայկին, Արամին, Տիգրանին, Տրդատին,
Մէկի խօսքով կախաղանից կը կախեն,
Վաղարշակին, Վահէնին, Վարազդատին։

Գիտեն թէ իրանց ապակեայ աչքերով,
Ջհդի մրքով զետ անճոռնի ճարտասան.
Կարեն խաբել բուն Հային սուտ խօսքերով,
Որ Պարսկական կեղծերից չի խաբուեցան։

Այս իմ պատմած Հայերի հազարի մէջ,
Մէկ լուսաւորչական ուղիղ Հայ չկայ.
Հոգւոյ անմահութեան համար ունին վէճ,
Մեղաց համար մեղայ, թառանչ, վայ չկայ։

Ուտելեաց սուրբն ու անսուրբը չեն ջոկել,
Կուտեն կրիայ, ոզնի, խաչափառ, և գորտ.
Լուսնոյ տակին նոքա ոչինչ չեն խոկել,
Ոչ հրեյից մատաղ և ոչ թուրքամորթ։

Թէ անթերի գրեմ սրանց ես բանքը,
Ծառոց տերևքը թուղթ լինին չեն տանիլ.
Թէ ունենամ Մաթուսաղայի կեանքը,
Ելի կիսատ թողեալ պիտիմ մեռանիլ։

Վասնորոյ շատ լաւ է մոռացութեան տալ,
Այս բաները որք լսելոյ չեն արժան.
Ըստ իմ կարծեաց ով ազգի ցաւ չի զգալ,
Է իսկ և իսկ որդնահար կոճղ անպիտան։



Այս քարը ձգեցի միամտութեամբ,
Նրան կըկպչի ով ոք որ արժան է.
Ճշմարտութիւնը ով որ անգթութեամբ-
Ուրանայ, նա անտաշ քարի արժան է։

Մէյեմ՛դ ժամանակը առ նեան է գնում,
Պիտի ծնանի ամեն բանի ներհակն,
Տեսնում ես որ ճրագով էլ չես գտնում,
Աշխարհի մէջ հին գործոց բուն տեսակն։

*
* *

# ՄԻՏՔ ՄԱՐԴՈՅ.

1. Միտք իմ մէկ ծով ես,
Մեղմ և վրդով ես,
Անմիտ մարդը ի՞նչ-
Գիտէ դու ով ես։

2. Միտք իմ դու հուր ես,
Կայծակից սուր ես,
Այժմ աստ յետոյ-
Ո՞վ գիտէ ո՞ւր ես։

3. Միտք իմ մէկ ձայն ես,
Յոյժ նեղ յոյժ լայն ես,
Լաւ բան շատ գիտես,
Ի՞նչ փոյթ միայն ես։

4. Միտք իմ դու լոյս ես,
Մերթ պիղծ մերթ կոյս ես,
Ոմանց մեծ տագնապ-
Իսկ ոմանց յոյս ես։

5. Միտք իմ մէկ լար ես,
Լաւ փորձաքար ես,
Ամեն կերպ բնութեան-
Քեզ կը յարմարես։

6. Միտք իմ շռայլ ես,
Շատ այլ և այլ ես,
Երբեմն գառն-
Երբեմն գայլ ես։

7. Միտք իմ մէկ ծառ ես,
Մաքուր պայծառ ես,
Ինքդ ներգործող-
Բայց անբարբառ ես։

8. Միտք իմ թեթև ես,
Արծուոյ թև ես,
Երբեմն հրեշտակ-
Երբեմն դև ես։

9. Միտք իմ դու սէր ես,
Շատ բանի տէր ես,
Ընդ մանկանց մանուկ,
Ընդ ծերոց ծեր ես։

10. Միտք իմ զուր ջանք ես,
Դառնագին կեանք ես,
Անհամբեր անձանց-
Մեծ սոգտանք ես։

11. Միտք իմ մէկ գանձ ես,
Յոյժ գերապանծ ես,
Երբեմն հլու-
Երբեմն անսանձ ես։

12. Միտք իմ մէկ ակն ես,
Դաբնեայ պսակն ես,
Սէյեադի սրտի-
Դու արեգակն ես։

*
* *

## ԳԵԱՓ ՑԱՀՆԱԶԻ.

Էդ ճուլտ ծիածան ունքերդ,
Էդ ճուլտ աննման աչքերդ,
Զորս մատաղ են պահանջում-
Մէկը ես եմ երեքն ո՞ւր է։



Էդ ճուլտ կարմիր վարդ թուշերդ,
Էդ ճուլտ եաղութ պռօշներդ,
Զորս մատաղ են պահանջում-
Մէկը ես եմ երեքն ո՞ւր է։։

Էդ ճուլտ սպիտակ ձեռներդ,
Էդ ճուլտ արեգակ ծըծերդ,
Զորս մատաղ են պահանջում-
Մէկը ես եմ երեքն ո՞ւր է։

Էդ ճուլտ վիրաց տեղ ծնկներդ,
Էդ ճուլտ ուխտատեղ ոտներդ,
Զորս մատաղ են պահանջում-
Մէկն ես եմ երեքն ո՞ւր է

Սէյեադ քոյ մագնիտ խօսքերդ,
Արդար միամիտ գործերդ,
Զորս մատաղ են պահանջում-
Մէկը ես եմ երեքն ո՞ւր է։

*
* *

## ԱՆՀԵՐՔԵԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՔ.

Ինչ սովորութիւն որ՝ բնութիւն դառաւ,
Տիրօջէն չի ջոկվեց՝ մինչ նա չի մեռաւ,
Գողը գող կը մեռնի՝ ագահը ագահ,
Մարդ իւր յատկութիւնքը՝ չի ձգիլ ցմահ.
Արբեցողն արբեցող՝ շռայլն շռայլ,
Կմնան յաւիտեան՝ առանց այլ և այլ.

Արատոյ տէրը երբ՝ մեծ փառաց հասաւ,
Իմացէք արատն էլ՝ հետը բարձրացաւ.
Յայտ է որ մարդիք միշտ՝ ծառայ մեղաց են,
Պետայ համար մեղայ՝ դրունքը բաց են.
Դիպուած չի ունենալ՝ սաոր վիճակը,
Որ ըստ մեծատանց՝ լնու փափագը.
Ո՞նց է կարող գործել՝ խեղճ կոշկակարն,
Այն մեղքը որ գործէ՝ միշտ Նախարարն.
Ո՞նց կարէ գործել հեզ՝ վաճառականն,
Այն մեղքը զոր գործէ՝ փարթամ իշխանն.
Ո՞նց է կարող գործել՝ Աստուածաբանն,
Այն մեղքը զոր գործէ՝ աշխարհականն.
Սէյեա՛դ էր ես պարզաբանում այս բանն,
Հասկացողին բաւական է այս քանն։

* * *

## 'Ի ՄԱՍԻՍ ԼԵՌՆԷ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ.

Ընդէր կոչես Մասիս Մասիս, դառնութեամբ մաշես զհոգիս,
Դու երբ մէկ սէր արիր ընդիս,, միշտ սիրեցեր զթշնամիս,
Զայնեա՛ քո հարազատներիդ, որ գան դեղ անեն դարդերիդ,
Ես մէկ սար եմ, անշունչ քար եմ, ի՞նչ կը կարեմ քեզ համար-
Առնել, որ հասնիս քոյդ փառաց։

Ո՞ւր են քոյ հզօր Արքայքդ, գդուանօք պահած տղայքդ,
Ազուանքդ, Սիւնիքդ, Հայքդ, քո թշուառութեան վկայքդ։
Զանյեա՛ քոյ և այլն։



Ո՞ւր են սեպուհ օգնականքդ, Նախարարքդ և իշխանքդ,
Որոց ճամբին եդեր կեանքդ, նոքա ուրացան քոյ ջանքդ։
Զայնեա՛ քոյ և այլն։

Քոյ լաւ և վատ ժամանակին, միշտ տքնել եմ ձեան տակին,
Ե՞րբ դու Տապանիս տախտակին, անկեղծ պատուեցեր ըստ յարգին
Զայնեա՛ քոյ և այլն։

Այլք լաւդ տեսին ես վատդ, անզոհութեամբ չկայ հատդ,
Ո՞ւր է քոյ անբաղդ Սէյեա՛դդ, որ միշտ կանէր քոյ գանգատդ
Զայնեա՛ քոյ և այլն։

* * *

## ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԼՈՒ.

Ամենայն բան զովել եմ՝ մնացել է միմիայն լուն,
Նրան էլ զովեմ գուցէ՝ իմաստունք զիս կոչեն գիտուն։

Սխալ է ով որ կասէ ինձ լուով ես անուն ճարում,
Քանզի ես ժամանակիս՝ դրած կանոնն եմ կատարում,
Մարդ գոյ որ իւր անունը՝ ըստ կարգին գրել չի կարում,
Կոյր բաղդի օգնութեամբը՝ երկիրներ է կառավարում,
Վասնորոյ ես էլ գործս՝ բաղդի կամքին եմ յարմարում,
Որ նա զիս չի խածանէ՝ քանզի է մէկ կատաղած շուն։
Ամենայն բան և այլն։

Կատաղած շուն է զի նա՝ բարին ու չարն չի ջոկում,
Անորոշ պատառում է՝ գայլն ու ոչխարն չի ջոկում,
Բթամիտ բժշկի պէս՝ ողջն ու տկարն չի ջոկում,

Բարձրութեան է հասցնում՝ մարդն ու տաւարն չի ջոկում,
Որովհետև աչք չունի՝ լոյսն ու խաւարն չի ջոկում,
Պղինձը ոսկուց չի ջոկող՝ մարդոյն տալիս է գանձ անհուն։
Ամենայն բան և այլն։

Իմ նպատակս լուն էր՝ բայց միտքս գլս ձգեց 'ի զատ,
Բանաստեղծը իւր մտաց՝ գերին է չի կարծէք ազատ,
Երբեմն Բուրաստանից՝ Նրան կը ձգէ յանապատ,
Թէ չ'ի կատարեց կամքը՝ ամենայն բան կմնայ կեսատ,
Այնպիսի ինքն-իշխանից գնաս էլ ո՞ւմ անես դանգատ,
Յայտնի բան է որ տէրը՝ խրոխտ կուլի ծառան նկուն։
Ամենայն բան և այլն,

Ժամ է արդէն, մի՛տ'ք արի՝ վերջացնենք լուոյ բանն,
Որ չ'ի լի թէ նեղանայ՝ մեր գիրքը կարդող իշխանն,
Վասն զի հարուստների՝ ձեռին է մեր դատաստանն,
Կամենան զանարժանն կ'նդունեն կ'ատեն արժանն,
Ներհակ բաներ շատ կուլի՝ երբ դատող լինին իշանն, (*)
Ա՜ւաղ էն ժողովուրդին՝ որոյ իշխանն է անասուն։
Ամենայն բան և այլն.

Լուն իմ մէկ խօսքիս միջին ծանօթ է Մակեդօնացւոյն,
Որպէս որ հարկաւոր է՛ր եղել նա սուրբ Նարեկացւոյն,
Որ գովեց զգօրութիւն նորա ընդդէմ գոռոզ մարդոյն,
Թէ ի՛նչ պէս է լուն նրան նեղութիւն տալիս գոյն զգոյն,
Մարդը թէ լաւ մտածէ՝ ոչնչութիւն կ'զգայ իւկոյն,
Զի նրան լուի ձեռօք են խրատում հողը գլխոյն։
Ամենայն բան և այլն.



Յայտնի պիտի լուն և բուն՝ ունենան միակերպ բնութիւն,
Զի ցերեկը հանգիստ են՝ գիշերը ունին ուժգնութիւն,
Երկուսն էլ մի օրինակ միշտ կը որոնեն հնութիւն,
Լուն մարդ կուտէր եթէ որ մարդը չունենար արթնութիւն,
Մանաւանդ որ նա ունի՛ նախնական բազմածնութիւն,
Նորա ամենայն վիշտը միշտ կրում է թմրած կատուն։
Ամենայն բան և այլն.

Յանկողնի մէջ գիշերը՝ ոստոստալով ման են գալիս,
Մէկ կողմից փախցնումես յետոյ միւս կողման են գալիս,
Թէ էս գլխից արթուն ես նոքա էն գլխան են գալիս,
Տեղիդ միջին դեղ ցանես բարձերի տական են գալիս,
Աչքդ խփար քեզ կուտեն չասես անազան են գալիս,
Մէկ աչքաճպում մօտիդ պատրաստ են զետ սրաթև թռչուն։
Ամենայն բան և այլն.

Սէյեա՛դ բաւ է վերջ արա՛ լուն այդ քան պատւոյ չէր արժան,
Գուցէ թէ կրետիկայք վերադ կտրեն խիստ դատաստան,
Ինքդ ես անօգնական ո՞վ պիտի լինի ապաստան,
Ինչպէս կարծես հայքը քոյ վնասիդ պիտի կսկծան,
Հաւատացի՛ր քոյ մահուան լուր բերողին պարգև կտան,
Զի նրանց ատելութեան դու պախարակողն ես արթուն։
Ամենայն բան և այլն.

*
* *

## ՈՒՍԵԱԼ ԹՈՒԹԱԿ։

Մէկ թութակ կայր ընդ մարդկան ընդելացած,
Մարդոյ լեզուից մէկ քանի բառ հասկացած,

Մէկ օր նորա տէրը խիստ հիւանդացաւ,
Թութակի թշուառ վիճակը զգացաւ,
Ասաց երբ այս ցաւիցը առողջանամ,
Իսկոյն պէտի վանդակի դուռը բանամ,
Թութակին թոյլ տամ գնայ իւր աշխարհը,
Տեսնայ իրան հայրենեաց դաշտն ու սարը,
Աստուած հիւանդի կտակը շուտ լսեց,
Յայտնապէս նա առողջանալ սկսեց,
Մահճից յարեաւ՝ խեղճ թութակին արձակեց,
Եւ նա փութով՝ իրան Հնդկաստան ձգեց։
Երբ լսեցին՝ վայրենի թութակները,
Ժողովեցան՝ ծերերը, առոյգները,
Եկին տեսին՝ այս նորաեկ թութակին,
Ողջոյն տուին, յետոյ երեսն պագին,
Նրանց միջէն՝ մէկ ծեր ճարտասան թութակ,
Գլուխ իջոյց՝ նրան խօսեց այս գունակ.
,,Բարի եկիր՝ բարի դու հազար բարի,
Դու որ կարօտ էաք տեսոյդ շատ տարի,
Ազգի համար՝ քաշեցիր երկար տանջանք,
Որ ցուցանես՝ հայրենեաց մեծ աշխատանք,
Մեծ յոյս ունի՝ քեզ վերայ հայրենիքդ,
Որ վայել է՝ քոյ անգին արգասիքդ,
Վասն զի դու՝ այն աշխարհից ես գալիս,
Ուր մարդկային՝ իմաստը լոյս է տալիս,
Գիտեմք զի դու՝ գանձարան ես գիտութեան,



Կհալածես՝ խաւար մեր տգիտութեան,
Որ կարենանք՝ մեք էլ մեր աշխարհումը,
Երջանկանալ՝ այս լուսաւոր դարումը,
Հայրենիքը՝ երբ տեսնայ զքեզ արժան,
Կըկանգնէ քոյ՝ պատւոյ համար մեծ արձան,
Յայտնեա՛ խնդրեմ քոյ սրտի նպատակն,
Կամի՞ք լինիլ՝ արդեօք մեր փառաց թագն,
Մեր մանկանց ցոյց տալ իմաստութեան շաւիղ,
Որ մեզ համար՝ լիցին լուսոյ շառաւիղ,
Միամիտ լե՛ր՝ չես մնալ թարց լիութեան,
Կստանաս վարձք՝ արժան քոյդ որդիութեան։‘‘
Որովհետեւ՝ մեր հիւր թութակն գիտուն,
Մոռացել էր՝ իւր հայրենական լեզուն,
Վասնորոյ չէր՝ կարում նրանց հետ խօսել,
Զի մի՛ գուցէ՝ սկսանեն բամբասել,
Թէ նա ոչ թէ՝ նոր գիտութիւն չէ բերել,
Այլ հայրական լեզուն էլ է կորցրել,
Այս պատճառաւ՝ չի կարաց տալ պատասխան,
Իւր հայրենեաց՝ ատենաբանի հարցման,
Քանզի ինքը՝ եղել էր ՚ի Պարսկաստան,
Որոյ գիտութեանց կարօտ էր Հնդկաստան,
Մէկ քանի բառ՝ որ գիտէր փարսի բառ էր,
Որով նա անդ՝ փարսերեն կըբարբառէր,
Տեսաւ որ ձեռք չեն քաշում թութակներն,
Արտասանեց այս մէկ քանի խօսքերըն։

„Եք.տու.սէ.չհար.փանջ.շեշ.բուզաստ եա հաֆթ.1.
Թութի ամատ, թութի նիշաստ, թութի րաֆթ.'' 2.
Թութակները այս խօսքերից հիացան,
Աստեղաբաշխական բառեր իմացան,
Մէկ մէկու դէմքին նայեցին փառք տուին,
Որ իրանց մէջ էլ գիտունք կու գտնուին,
Տեսէ՛ք ասացին հեռու աշխարները,
Թէ ո՞րքան է սիրել երկնային Տէրը,
Որ մարդիքը կատարեալ հրեշտակներ են,
Ամենքն էլ անհուն գիտութեան տէր են,
Որ մեր թութակը Պարսկաստուն գնալով,
Փոքր ժամանակ անդ գերի մնալով,
Ստացելայ փիլիսօփայի իմաստ,
Սիրտը եղել է գիտութեան առագաստ,
Կտեսնէք ո՞նց պարօն իմաստասէրը,
Կլուսաւորէ մեր քնքուշ ձագերը,
Որք Աստուծով զկնի քանի ամաց,
Կլինին այսպէս սրամիտ աչքաբաց,
Այնուհետև երբ մեր հայրենեաց նման,
Կարէ լինել լուսաւորեալ Եւրօպան։
Զայս ասացեալ կամեցան իսկն իմանալ,
Թէ բաբունին ո՞ւր կամի հանգստանալ,

1. 2. Այս երկու տող փարսկերէն խօսից միտքը սա է ,,Մէկ, երկու, երեք, չորեք, հինգ, վեց օր է կամ եօթն. Թութակը եկն, թութակը նստեց, թութակը գնաց։'' Որովհետև հնչումն այս բառեր շատ յարմար են ձայնի թութակաց, վաճառող պարսիկ ըստ մեծի մասին այս երկտող ոտանաւորն են ուսուցանում թութակներին։



Որքան հարցրին պատասխան չ՛ստացան,
Հետաքրքիրները իսկոյն հասկացան,
Որ պարօնը մոռացելայ իւր լեզուն,
Ըստ արժանւոյն տգէտ է ոչ թէ գիտուն,
Թողին նրան մենակ իրանք ցրուեցան,
Իրանց սխալմունքն իմացան լռուեցան,
Ասացին թէ հազար հեռու տեղ գնաս,
Խելք չեն տալ քեզ պիտի հետդ ունենաս,
Մի՞ թէ էշը որ Երուսաղէմ տանեն,
Նրան պիտում է մահտեսի անուանեն,
Իմացէք որ հեռու երկրի անունն է,
Գովականը մարդոյ հայրենեաց տունն է,
Հարիւր տարի որ օտար երկրում մնաս,
Թէ խելք չունիս էլի դատարկ կուդառնաս,
Յետոյ մեր խեղճ փիլիսօփայ թութակն,
Սոված, ծարաւ վերջացոյց իւր վիճակն։
Ահա՛ սա է սնոտի աշխարհի ծէսը,
Ես ինքս եմ տեսել բազում էսպէսը,
Երբ մեզանից մէկն այլ աշխարհ է գնում,
Մեր աչքներըս նորա ճամբին է մնում,
Թէ պիտի գայ և բեռներով խելք բեր է,
Զենք ասում նա 'ի բնէ ի՞նչ խելքի տէր է,
Երբ դառնումէ ընդ առաջ ենք ելանում,
Նորա համար լաւ տուն ենք պատրաստ անում,

Յորում քանի օր նա հանգստանում է,
Յետոյ բերած փաթեթները բանում է,
Տեսնումենք որ միջի բաները շատեն,
Բայց ինչ շահ որ ամբողջ չեն տխի կիսատ են,
Բերել է որ անհմուտ անձինք ճարէ,
Իրան սիրտը ուզած գնով վաճառէ,
Ոմանք ասումեն թէ շատ գեր զգօն է,
Եթէ որ լաւ նայես „Զեմլէն գիգօն է,“
Կտեսնես որ յետ սակաւ ժամանակից,
Շրջում է անառակութեան քամակից,
Վաւաշ վարուք հիւանդութիւն է գտնում,
Անպատութեամբ ՚ի գերզման է մտնում։
Մեք ևս ունիմք այսպիսի փիլիսօփայք,
Որք ո՛չ Նեմեց են, ո՛չ Ռուս և ո՛չ Հայք,
Թէպէտ ունին ճեմարանեան ատտեստատ,
Միայն չունին իրանք գիտութիւն հաստատ,
Ո՛չ հայր կրճանաչեն ո՛չ քոյր, ո՛չ եղբայր,
Բնութեանցը ո՛չ արմատ գոյ և ո՛չ ծայր.
Արատութեամբ ամենը մոռացած են,
Զեղխութեան բեռան տակին կեռացած են,
Նրանց տասնի հոգին մէկ տեղ հաւաքես,
Չեն լինիլ մէկ ուղիղ հայի հոգւոյ կէս,
Եթէ սուտ է Սէյեադին քարկոծեցէք,
Թէ չէք հաւատում ինքներդ փորձեցէք։

*
* *



# ՅԱՆԿԱՐԾԱԽՕՍ ԲԱՆ։

Գեղեցիկ սիրականս՝ խլեց ինձանից ջանս,
Խլեց ինձանից ջանս՝ գեղեցիկ սիրականս.
Համբուրիւ պատուականս՝ բժշկեց սրտիս խոցը,
Բժշկեց սրտիս խոցը՝ համբուրիւ պատուականս.
Պատճառ ուրախութեանս՝ նազելւոյս պատկերն է,
Նազելւոյս պատկերն է՝ պատճառ ուրախութեանս.
Նա առնէ դատաստանս՝ որոյ ես Սէյեադն (*) եմ,
Որոյ ես Սէյեադն եմ՝ նա առնէ դատաստանս։

# ԵՐԳ։

Նախամայր Եւան պտուղն եկեր,
Շողոմեալ խաբեաց զԱդամ հայրն մեր,
Լուր դառն մահու վասն մեր եբեր,
Եղաք մահացու՝ թէ մանուկ թէ ծեր։

Ձայն եհաս երկնից՝ թէ ո՞ւր ես Ադամ,
Ասաց խաբեաց զիս՝ կինս այս անզգամ,
Թագեալ թզենւոյ տակին կողբամ,
Իսկ կինն ձայնեաց օձն արար ո՞ Տէր,

Յայնժամ կենարարն միանգամայն,
Անիծեաց զօձն՝ զԱդամ և զԵւայն,
Եհան դրախտէն նրանց նոյն ժամայն,
Յետոյ զգացին նոքա շատ ցաւեր։

*) Սէյեադ ըստ Արաբացւոց է որսորդն, վասն որոյ և ես որոնող ամենայն պատճառաց գոլով, որսորդ անունն ընտրեցի մականուն, ըստ սովորութեան՝ յարևելեան երգչաց, յորոց ոմն Հաֆիզ կոչի, ոմն Սայդի, ոմն Փիրդուսի և այլն, որք նրանց իսկ անունը չէ, այլ մականուն։

Ի փրկութիւն մեր Աստուած մարմնացաւ,
Զետ մարդ յանարատ սուրբ կուսէ ծնաւ,
Ի նշան փրկութեան՝ ջրով մկրտեցաւ,
Խաչեցաւ, մեռաւ՝ կոչուեց մարդասէր։

Յարեաւ մահուանէ յաւուր երրորդին,
Հայրն վկայեաց՝ դա՛ է իմ որդին,
Թո՛ղ նա պահպանէ Սեյեադ որսորդին,
Որ ո՛չ մեղաց վիշտ՝ տեսանէ ո՛չ վէր։

*
* *

# Վ Ի Ժ Ա Կ

[illegible] Հայոց, [illegible]

## ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ։

Ծուռ է դրած մեր Հայաստանի քարը,
Նրան չէ կարող ուղղել աշխարհը.
Իւրաքանչիւր աշխարհ գիտութեան տիրեց,
Իսկ Հայաստան միշտ տգիտութիւն սիրեց.
Յիմարների հետը միշտ գործ ունեցաւ,
Որ իւր կեանքը մինչի ցայսօր վա՛յ է ցաւ,
Աստուած չարած թէ խելօք մարդ կոչեցար,
Համարեա՛ մեծ անբաղդութեան մէջ անկար.
Ձես կարող դու մէկ սրտացաւ ունենալ,
Ոչ օգնական կու գտնես ոչ ձեռն ընկալ.



Կամիք գիտել Նորա ճակատագիրը,
Նորա պատմութեան երկար է գանջիրը.(*)
Ոչ ոք չէ կարող հարուստ պատմել նրան,
Շատունք կամեցան միայն շուտ վեր դրան։
Խելօք Հայը շարադրում է մին գիրք,
Որ լինում է գիտութեան աղբիւր և ձիրք.
Մէջը ընտիր անծանօթ մտօք լիքըն,
Համարեա՛ շատ իմաստից բանալիքըն.
Նորա գիրքը ամենայն ոք կարդում է,
Թէ չէ կարում քփրելը գրպարտում է.
Ասելով թէ „նա էնքան իմաստուն է,
Որ նրանից այս գիրքը ո՞վ կընդունէ,
Նա կարող էր առաւել լաւը գրել,
Սորա միտքը նա լաւ չէ բացադրել.“
Իսկ թէ գրքոյ մէջը գտնեն մէկ ծուռ միտք,
Արտասանութիւնք, պարբերութիւնք, երկմիտք,
Այն ժամանակ նոքա թողած լաւերն,
Կսկսանին դատել խեղճ գրքոյ տէրն.
Ասելով թէ „նորա պէս գիտութիւնն,
„Ո՞րպէս ծնաւ այսպէս տգիտութիւնն.“
Բայց համարեա՛ թէ նոյն ժամանակումն,
Տեսնում են գիրք ծախողի կրպակումն,
Անյայտ մարդոյ շարադրած տետրակը,
Որ չի մտել հեղինակաց ցուցակը,

---

*) Զանջիր տաճկերէն է և շղթայ է նշանակում։

Մինչ ցայն ոչոք նրան չէ էլ ճանաչել,
Թէ արդեօք նա ո՞ր ձորում է կանաչել,
Սկսում են նորա վերան զարմանալ,
Ասելով թէ „ո՛վ էր կարող իմանալ,
„Թէ այս մարդը այսպիսի դաղանդ ունէր,
Եթէ գիրքը չի լինէր ո՞վ կընդունէր,
Թէ նա գիտէ լաւ մտքեր շարադրել.
Մարթ է սորա անունը ոսկով ծրել,
„Քանզի երեկ սա ընդ մեզ խաղ էր անում,
„Ով կկարծէր թէ հանճար գոյ նրանում,
„Այս բանը յոյժ արժան է հիանալոյ,
„Եւ ինքն էլ արժան է պատիւ տալոյ։“
Այժմ տեսնենք տետրակի զօրութիւնը,
Որ հասկանանք գովողաց բնութիւնը.
Նորա միտքը իւր թղթոյ պէս կապոյտ է,
Այնպէս գիրքը խիստ դատելը ի՞նչ փոյթ է.
Տիպը լայն է զօրութիւնը անչափ նեղ,
Բառը անտաշ բանի իմաստը տգեղ.
Դատաքննիչք գրոց գլուխ չեն դրել,
Սրբագրողն էլ լաւ չէ սրբագրել,
Յարմարելով կամաց հասարակութեան,
Որ ներհակ է միշտ նրբամիտ գիտութեան։
Խելօք հայը թէ յանբաղդութիւն անկաւ,
Կորոյս փառքն ու պատիւը մէկ փորձանքաւ,



Կամ թէ կեանքն էլ անկելայ երկիւղի տակ,
Չի աշխարհիս փորձանքն է տեսակ տեսակ,
Որ չէր կարող խելօք լինիլ նախատես,
Ասա՛ տեսնեմ դու ո՞նց նրան կազատես.
Ազգականքը մերձաւորքը չեն օգնել,
Եթէ տեսնան գերութեան մէջ չեն գնել,
Լաւ գիտացէք խելօք հայոյ վիճակն,
Նա է զանազան թշուառութեանց տակըն.
Այն հայերը որք կոչում են բարեգործ,
Որք օգնում են իբր 'ի շահ վշտացելոց,
Թէև նոքա ըստ ձևոյն են ողորմած,
Միայն խնդան միշտ 'ի վերայ աղքատաց.
Խելօք հայոյն նոքա են խիստ թշնամի,
Թէև լինի նա իրանց մերձ խնամի,
Եթէ հմուտ մարդը մէկ հետ սխալի,
Այլոց տասն սխալը չէ զգալի։
Խելօք հայը եթէ օրը կէս օրին,
Տեսնեն ընկած 'ի միջի անտակ հորին,
Հայքը նրան չեն տալ ձեռն օգնութեան,
Եւ չեն ձգել յայն գուբը մէկ առասան,
Որ նրանով կարենայ նա ելանել,
Իւր խղճալի ընտանիքը դարմանել.
Թէև լինին նոքա դիփ արիւնակից,
Ոչով չի լինիլ խելօքին ցաւակից,

Այլ կընայեն նրան անխնայօրէն,
Թէ տեսցուք ո՞նց կելանէ նա հօրէն.
Թէպէտ ոմանք հօրից կը մերժենան,
Որ խելօքի գրութեան վերայ խնդան,
Կտան Նրան անթիւ անշահ խրատներ,
Որ առաջօք լինին գթած հոգւոյ տէր.
Ոմանք կամելով մարդասէր անուանիլ,
Կասեն ,, Ը՞նչու պիտէր ՚ի գուբ անկանիլ,
Սորա նման անուանի խելօք մարդն,
Քանզի յիմար անձանց տեղն է թակարդն:‘‘
Երբ նա օգնութեամբ բաղդի ելաւ հօրից,
Ամեն մէկը հօրի մօտ եղողներից,
Կասեն ,,եթէ չէինք նրան խրատել,
Նա չէր կարող երբէք իրան ազատել.‘‘
Եւ եթէ այն հօրից ելեալ խելօքն,
Կրկին մեծութեան հասաւ իւր խելօքն,
Այն մարդիքը ,,մեր լաւութիւնն է‘‘ կասեն,
Թէ չնդունեց պիտի յայտնի բամբասեն,
Ասելով թէ ,,երախտամոռ է ստոր,
Զի չէ կամում ճանաչել զերախտաւոր:‘‘
Թէ կամում ես Հայն ի՞նչ է լաւ հասկանաս,
Դիփ Հայերը բաժանվում են յերկու դաս,
Յորոց մէկը կարծում է միշտ թէ անսուտ,
Խելօք մարդը սիտի որ լինի պըլուտ.(*)

(*) Պլուտ բառը Ռուսերէն է որ խաբեբայ է նշանակում:



Կամ մշտապէս խորհում է թէ անխափան,
Խելօքն է հպարտ կամ ինքնահաւան.
Վասնորոյ խելօքը այս պատճառներով,
Զունի երբեք մէկ գրութիւն ապահով.
Նոքա որ խելօքին կոչում են հպարտ,
Նրանք են խելօքի համար ծանր դարտ,
Քանզի եթէ խնդիրքները մոռանաս,
Կամ պատահմամբ նրանց դու ողջոյն չտաս,
Կամ թէ չշնորհաւորես տօն օրն,
Ստացած աստիճանն կամ նոր շորն,
Ի՞նչպէս կարող է մարդը միշտ մոռանալ,
Նրանց մօտին առանց պատճառ չի մնալ.
Խեղճ խելօքին կտան հպարտ անունը,
Եւ կսկսեն աւերել նորա տունը.
Տեղ չէ գտուած գրպարտութեանց ցաւերին,
Նոցա տեղը գիտէ բժիշկն վերին.
Քանզի եթէ ատենախօս թատրօնի,
Լաւ չէ, կասեն ,,վատ է ձայն երգեհոնի.‘‘
Վաճառողը պատկերը ծուռ լինի դրած,
Կասեն ,,պատկերահանն է կե՛րպը ծռած.‘‘
Ասէք տեսնեմ այսպէս թիւր դատողութեան,
Ընդէմ ո՞վ է կարող հասնիլ թողութեան,
Ահա՛ խելօք Հայոյ կեանքն հրաշալի,
Որոյ ճամբեն է նեղ, անձուկ փշալի.

Ինչպէս մաթէմատիկայի արհեստիւ,
Երիւք յայտնի թուովք գտանի անյայտ թիւ,
Հայերն էլ մէկ անուանի խելօքին,
Կկպցնեն երեք հարիւր պոչ մթին։
Խելօք հայը թէ սկսեց առուտուր,
Ո՛չ ոք ընկեր չի կամիլ լինել էնդուր.
Կասեն „որով նորա խելքը անչափէ,
Անպատճառ նա պիտում է զմեզ խաբէ։“
Խելօք հայը երբէք բարեկամ չունի,
Քանզի ով ոք մէկ արատութիւն ունի,
Կու վախենայ նրանից շատ մօտենալ,
Զի մի՛ գուցէ նա կարասցէ հասկանալ,
Դատել նորա վատ արարքը խստութեամբ,
Բարին չարին մերաձաւոր չէ բնութեամբ։
Խելօք հայը ունի շատ ընդիմախօս,
Որ նրանցով է վնասվում նա ա՛փսոս,
Կաշառակերք չեն ծառայում նորա հետ,
Զի նա նրանց հետ չի լինիլ համաձէտ,
Ինքն չի ուտիլ զետ կաշառ ատեցող,
Նրանց էլ միշտ պիտի լինի արգելող։
Խելօքը թէ փունչայ ըստ պատահման,
Կասեն ծաղր է կամ նշան հպարտութեան,
Կամ ո՞վ կար է խելօք մարդոյն հաւատալ,
Թէ կարէ նա առանց առիթ փունչալ,



Նորա քայլը չափած է խօսքը կշռած,
Նա գլխովին է չար լեզուի տակ ընկած։
Մէկել դասուն աշխարհը անքաղաքավար,
Անուանում է անբան, անզգայ, յիմար.
Նա է մայրը տիփ յառաջադիմութեան,
Որպէս աղիւսք սիտոյ են տան շինութեան.
Միով բանիւ պատուական յիմարները,
Թէ չի լինեն չեն գլուխ գալ բաները.
Նոքա այնպէս հարկաւոր առարկայ են,
Որոց մասին տիեզերք կու վկայեն,
Թէ յիմարը մէկ էնպէս անգին ինչ է,
Թէ չի լինի ամենայն բան ոչ ինչ է.
Եթէ դասը յիմարաց անյայտ լինէր,
Աշխատասէր մարդկանց շահը ի՞նչ կ՚լինէր.
Աշխարհումը ո՞ր յառաջադիմութիւն,
Ծաղկելայ երբ չի եղել յիմարութիւն.
Քանզի ամեն բանի յառաջ տանողն,
Է այն բանին եռանդիւ հետևողն.
Այսինքն մեր թանգագին յիմարները,
Են նորանոր լաւ գիւտերի վաւերը.
Սոքա էլ միշտ խելօք մարդոյն վնասեն,
Որ տեղ նստեն խելօքի վատը կասեն,
Ինչպէս մեք տեսանումենք ամեն օր,
Մեր ազգի մէջ մականուններ նորանոր,

Մէկը կոչվում է յազգէն Մամիկոնեան,
Որոյ հայրը եղել է խեղճ այգեպան.
Մէկը կոչվում է բացարձակ Տիգրանեան,
Իսկ հայրը էր կտաւագործ պատուական.
Մէկը կոչվում է սերունդ Արշակունեան,
Որոյ հայրը ո՛վ գիտէ էր ձկնապան.
Ոմն կոչվում է բողբոճ Արծրունեան,
Մանդակունեան, Մուշեղեան, Խո՛ռխոռունեան,
Որոց հարքը մշակք են կամ ջաղացպան.
Որք կոչվումեն հին իշխանաց անուամբը,
Ի՞նչպէս կարէ երկինք լինիլ սև ամպը.
Թէ լաւ նայիս սրանց ամեն բաներին,
Չեն կարող ստս կոչել այն իշխաններին.
Որք ՚ի հնումն էին ազգի աշտարակք,
՚Ի փրկութիւն նորին պատրաստ և արագք.
՚Ի շահ ազգին իրանց ՚ի մահ կուտային.
Այժմեան կեղծքը իրանք են ազգին խային.
Հին իշխանաց կոչումը գողացել են.
Նոցա անգին բնութիւնը թողացել են.
Եթէ աեսնեն Հայերումը խելօք մարդ,
Նոյն ժամայն կձգեն գնա ՚ի թակարդ.
Թէ պատահմամբ նրանց հետ գործ ունենաս,
Կրկողոպտեն զքեզ տկլոր կումնաս։
Վա՜յ քեզ՜ հազար վա՜յ որբացեալ ազգ հայոց,
Դիւցազինքդ փոխել ես ընդ աղայոց.



Մէկ մարդոյ որ մականունը կեղծ լինի,
Անպիտան է թէ և բանաստեղծ լինի.
Եթէ սոքա նախնեաց սերունդք լինէին,
Վարուք բարուք նրանց պիտի նման էին.
Զի ինչ ժառանգ որ չէ իւր նախնեաց նման,
Նա հարազատ ժառանգ չէ անտարական.
Ինչ որդւոյ մէջ նմանութիւն չկայ հօր,
Նա չէ որդի հօր այլ ստացուած է մօր.
Բոլոր աշխարհի միջին Յուդան մի է,
Հայոց ազգի մէջը Յուդայիւ լի է.
Որ եթէ մէկ հայոց միջին խելք տեսնան,
Լեզուները կսրեն առանց յեսան.
Այն խելօքի սիրտը կանեն վիրաւոր,
Որոյ մասին օրինակք կան բիւրաւոր.
Ինչպէս որ մեր հռետոր Մխիթարին,
Ինքը բուն հայ գոլով կաթոլիկ արին,
Սէյեա՛դ սուտ ա՛ռ որ դու էլ էն ազգից ես,
Թէ լաւ թէ վատ դու ևս նրան կից ես։

*
* *

# ՏԵՍՈՒԹԻՒՆ

*Նոյեան Աղաւնւոյ ընդ Նոյեան Ագռաւու զկնի*
*Արձակման նոցա 'ի Տապանէ վասն լրտեսութեան։*

Երբ Տապան Նոյի՝ ըստ վերին շնորհաց,
Հանգիստ անվտանգ՝ 'ի գագաթն Մասեաց,
Յայնժամ Նոյ զդուռն՝ Տապանի եբաց,
զԱգռաւն յաշխարհ՝ լրտես առաքեաց։

Ագռաւն խնդաց՝ ելեալ Տապանէն,
Ձեռ կալանաւոր՝ զերծեալ 'ի բանտէն,
Չուզեց նա դառնալ՝ 'ի Տապան անդրէն,
Զի շատ սոդտանք էր կրել անդէն։

Նոյ ետես որ սպասման ժամն անցաւ,
Ագռաւը կրկին առ նա չի դարձաւ,
Յոյս համբերութեան 'ի նմանէ բարձաւ,
Զի ժպիրհ ծառայն է յոյժ վատթար ցաւ։

Թռոյց Տապանէն զաղնիւ աղաւնին,
Սա ետես զի ագռաւն ուտէր չնչին դին,
'Ի հեռուստ ողջոյն՝ ետ նա անարգին,
Նա չետ պատասխան՝ նմա ըստ կարգին։

Աղաւնին եբաց՝ բերան իւր մաքուր,
Ասաց վատ ընկեր ձայնի իմում լո՛ւր,
Տեսեալ քոյ զայդ դի՝ նեխեալ անմաքուր,
Պատուէր Նոյի էր՝ մոռացման ետուր։



Նա որ մեզ պահեաց՝ տասնումէկ ամիս,
Ջուրը մեզ չ'մեռցուց՝ զեդ դիդ զոր ուտիս,
Ա՞յդպէս երախտագէտ լինիլ կամիս,
Նա քեզ սպասէ՝ իսկ դու աստ յամի՞ս։

Մի՞թէ զայս տեսեալ՝ չըպիտի յաւիտեան,
Կոչել զազգ թռչնոց՝ ստոր, անպիտան,
Թէեւ այլք ընդ քեզ՝ չեն իսկ միաբան,
Տե՛ս քոյ վատ գործդ'ունի ի՞նչ վախճան։

Ագռաւը թողեալ՝ իւր բերնի խորտիկ,
Ասաց աղաւնոյն՝ բարկացեալ սաստիկ,
Ի՞նչ կը զուրցէ քոյդ՝ կոշտ լեզու ճարպիկ,
Որ ոտով գլխով՝ ես մարդկան կապիկ։

Նոյ մեզ պահպանեց յիւրում Տապանի,
Մի՞թէ սա է գործ՝ յարգոյ արժանի,
Թէ նրան և զիս՝ տան դատաստանի,
Նա պիտի խստութեան տակ անկանի։

Աստուած մեզ ստեղծ՝ մէկ շունչ կենդանի,
Մարդն զմեզ արար՝ ինքեան պիտանի,
Մեր ազգից ոմանք՝ են նմա ընտանի,
Կրեն աղետներ՝ տե՛ս քանի՛ քանի։

Եղկելիք տալիս են՝ նմա ձու և փետուր,
Յորոց նա շինէ բարձ և կերակուր,
Մարդը բաւական՝ չի գիտէ էստուր,
Մորթեալ խեղճերին՝ քաշէ 'ի շամփուր։

Առանց մարդը չէր՝ լինի՛լ ջրհեղեղ,
Պատճառ ջրհեղեղի՝ նորա գործն էր տգեղ,
Որով բարկացեալ Արարիչն ահեղ,
Ընդ մարդոյն կորոյս՝ և զանբանս անմեղ։

Է՞ր դառնամ այնպէս՝ թշնամւոյ մօտը,
Որ ձգէ թակարդ՝ գլխ հետազօտը,
Զգլուխեմ երբ ինձ՝ կպնումէ հոտը,
Անգութին ո՞նց է՝ ընկեր երկչոտը։

Մարդը եղեմայ գիտութեան ծառն է,
Շունչ նորա օձի՛ լեզւոյ պէս դառն է,
Ազատութիւնը կենաց լաւն ու պայծառն է,
Արի գնանք շրջենք քանի ամառն է։

Դարձաւ աղաւնին՝ ագռաւին ասաց,
Խրատ քոյ է իսկ՝ յորդոր պատրանաց,
Ապերախտի օրը կուլի միշտ սուգ, լաց,
Անշուշտ փորձանօք՝ կզրկի կենաց։

Առաւ նա տերև՝ ձիթենւոյն բերան,
Դարձաւ սրաթև առ Նոյ 'ի Տապան,
Ագռաւը Նոյին՝ եղև պարտապան,
Ցոփութեամբ եղև՝ անիծից արժան։

Նոյ կառոյց վասն իւր անգին աղաւնոյն,
Ընդ ոտիւք Արագած լերին կճեայ բոյն,
Զարդարեաց զնա՝ զարդիւք գոյն գգոյն,
Համեմատ բարուց՝ իւր սիրեցելոյն։



Ո՞ւր որ բոյն ունէր՝ աղաւնին արթուն,
Անդ այժմ է Հայոց գիւղն աղաւնատուն, (*)
Պետ տեղւոյս երբեմն էր Սէյեադն հայկազուն,
Անաչառ, անկաշառ, անխոնջ և անքուն։

*
* *

# ԱՏԱԾՄՈՒՆՔ.

Աստուած յօգնել ինձ նայեաց՝ և Տէր յընկերել ինձ փութա.
Ասաց Արքայ—մարգարէն՝ ո՞վ է կարող ասել սուտ ա.
Ով նախագուշակարանց՝ պսած բաներին երկրայի,
Նա պիտի ինքը գինքը՝ խեղդամահ առնէ գեդ Յուդա,
Իսրայէլ ազգ սիրական՝ գուլով մոլորվեցաւ շաւղից,
Զիմացաւ որ անհիմն՝ յոյսը իրան անօգուտ ա.
Ասած է թէ մարգարէն՝ իւր երկրումը պատիւ չունի,
Ես քանիցս փորձեցի՝ այս խօսքի մէջ ծուռ չի գտայ.
Մեր մտում թաղուած միտքը՝ հաղիւ է մեզ կառավարում,
Ո՞վ կարէ յանդգնութեամբ՝ ասել օրէնքը ելմուտ ա.
Սէյեա՛դ սկիզբը մեղքերի՝ ամեն մարդայ հաճելի է.
Նա մէկ կերակուր է որ՝ քանի մնաց վատ համ կըտա։

*
* *

(*) Աշաւնատուն է Հայոց գիւղ Արագած սարի ստորոտումն և չէ հեռու սուրբ Իջման տեղւյը, որոյ գաւառակի անունն է Սարդարաբադ, յորում 'ի 1855 և 1856 թվերին գաւառապետ էր Կապիտան Մաղաթեանց՝ հեղինակին ստորակեա։ Պետի ներած նորա սխալանքն, որ ինքն երան անաչառ, անկաշառ, անխոնջ և անքուն է կոչում, նախ վասն այն՝ զի նորա այս յատկութիւնքը յայտնի են ամենայն ժողովրդոց Երևանու նահանգին, և երկրորդ. եթէ Հայոց ազգը սովորութիւն ունենար իւր հաւատակցաց արժանաւորութիւններն գովելոյ, յայնժամ Սէյեադի ինքն երան յատկութիւնքը պատմելն՝ անտեղի էր ըստ ամենայնի։ Ս. Շ.

# ՆՄԱՆՈՒԹԻՒՆ.

Յաւուր միում սոված գոլով՝ նուաղեալ էի զգալի,
Յանկարծ տեսայ մէկ մեծ կաթսայ՝ կրակումը եռ էր գալի.
Միջին նայեցի տեսի որ՝ լիքն է զանազան կենդանեօք.
Երբ համը տեսնալ ուզեցի՝ տեսայ մէկ բան զարմանալի.
Կակոզքը ջուր էին դառել՝ կոշտերը դեռ. լուր չունէին,
Ինքս ինձի ասացի սա՝ լաւ խրատ է իմանալի,
Գոմէշն ու գառը ինչ կուլի՝ եփել շինել մէկ կերակուր,
Մինչի մէկի թրջուիլը՝ միւսը ձեան պէս կը հալի.
Հաւը պիտի ընդ կաքաւին՝ և գառը ընդ այծու ուլին,
Եփես որ կերակուր լինի՝ ուտես խմես շրփշրփալի.
Միտքս ընկաւ Հայաստանը՝ որ նման է այն կաթսային,
Նորա դրութիւնը եթէ՝ լաւ մտածես է ողբալի.
Քանզի նրա մէջը լիքն է՝ զանազան բնութիւններով,
Որոց մէկը միւսի համար է՝ առարկայ տաղտկալի.
Հայաստանը այս րօպէիս՝ հարիւր կերպ բնակինչք ունի,
Եթէ նա կրկին նորոգվի՝ զարմանք կուլի հրաշալի.
Չի կարծեմ որ նոքա ընդ միմեանց՝ եփվելով կերակուր լինին,
Եթէ աչօքս տեսանեմ՝ կասեմ է անհաւատալի.
Սա մէկ խօսք էր Սէյեադն ասաց՝ թողկաց փորձողները փորձեն,
Ի՞նչ հայ է նա որ այս մասին՝ գիշեր ցերեկ չէ ազալի։

*
* *



# ԳԵԱՓ.

Բաղդ երեսիդ քոյ լինի թուք,
Չի ամենայն գործդ է անշուք,
Դու մէկ վավաշ կին ես յատուկ,
Հասն ու չհասն չես ջոկում։

Իշն ընդէմ իրան կամաց,
Բազմեցուցեր յաթոռ փառաց,
Դու մայր ես դիփ պասակերաց,
Ուտիքն ու պասն չես ջոկում։

Տխմարին արել ես հարուստ,
Իմաստունը չունի հագուստ,
Անարժանին ես դու միշտ դուստ,(*)
Փլաւն ու սպասն չես ջոկում։

Որտեղ դտել ես մէկ տգէտ,
Նրան արել ես գանձապետ,
Ո՛րտեղից եղեր հաշուագէտ,
Երեքն ու տասն չես ջոկում։

Գլխիդ դրել ես սև վեղար,
Ամենայն կերպ մեղօք մեղար,
Սէյեադ երբ վարդապետ եղար,
Թագն ու վակասն չես ջոկում։

*
* *

(*) Դուստ Պարսից բառ է և նշանակում է բարեկամ։

## ԳԱՆԳԱՏԱՆՔ.

18$\frac{1}{11}$59 'ի Տփխիս։

Ո՞վ վարդ մի՞թե դու՝ կորցրել ես՝ քո խեղճն ու գութը,
Որ բիւլբիւլի՝ պայծառ կեանքը՝ արել ես մութը։
Սիրոյդ արժանը՝ բիւլբիւլն է ոչ թէ սև խարըն,
Ի՞նչու վերջնոյն՝ յոյս ես տալիս՝ առաջնոյն սուտը։
Ի՞նչ է առիթը՝ որ նազելիք՝ դիփ անխնայ են,
Ի՞նչ է չի գիտեմ՝ էստում նրանց՝ շահն ու օգուտը։
Ո՞նց չեն ամաչում՝ սիրահարաց՝ քաշած թառանչից,
Արգելում են՝ նոցա իրանց՝ մօտ ելն ու մուտը։
Որչափ կուրացած՝ աչք էլ լինի՝ պիտի ճանաչէ,
Որ արիւնով՝ ներկած քարին՝ թայ չէ եաղութը։
Ասէք անաչառք՝ ձեր սրտներիդ՝ շիտակ վճիռը,
Բու թռչնոյ հետ՝ ո՞նց կը բնակի՝ աղաւնոյ ճուտը։
Սէյեադ բաւ է շատ՝ ճշմարտութեան ետքից մի՛ շրջիր,
Վերջը ձեռումդ՝ կ՛մնայ նորա անպիտան տուտը։

*
* *

## ԲԱՄԲԱՍԱՆՔ.

Է՞ր ես դողում սուրբ խղճմտանք՝ դու խոմ ինձ պէս չես սևացել,
Ես ինքս մարդկային տանջանք՝ սուտ մարդասէր եմ ձևացել։

Գլխիս դրել եմ սև վեղար՝ գործուած այծի նուրբ բուրթիցը,
Միայն անառակ գործերով՝ վատթար եմ Ջիլան Քուրդիցը,
Ամենևին չեմ կենդանի՝ սառած եմ մեղքի ցուրտիցը,



Աղօթք կարծելով չամաչէք՝ իմ բերանիս ղարթ ղուրթիցը,(*)
կախարդական պատրանքներով՝ թշուառացել եմ խևացել։
Է՞ր ես դողում և այլն։

Ինքս քարոզիչ հաւատոյ՝ ի՞նչ է հաւատը չի գիտեմ,
Ուսուցել եմ սուրբ օրինաց՝ բայց լաւն ու վատը չի գիտեմ,
Գիշեր ցերեկ փող կպաշտեմ՝ ո՞վ է ժլատը չի գիտեմ,
Ինչ տեսնեմ կը յափշտակեմ՝ սակաւ ու շատը չի գիտեմ,
Ընպէս կարծեմ ամեն մարդոյ՝ հաւատն էլ է թեթևացել։
Է՞ր ես դողում և այլն։

Կոյրը կասեն կարծում է թէ՝ ոչ ով անարատ աչք չունի,
Այն մարդը անվնաս է որ՝ 'ի բնէ շառաթ(**) աչք չունի,
Թոյլ տուք նա ձգէ նախ քարը՝ ով ոք արատ աչք չունի,
Նրան ես ինչպէս սուրբ կասեմ՝ որ դիւափարատ աչք չունի,
Քանզի նշանք երկնից և հրաշք՝ սուրբ անձանց են երևացել։
Է՞ր ես դողում և այլն.

Երեսօք մարդոյ եմ նման՝ իսկ սիրտս է դժոխք գազիր,
Որտեղ զեխութեան ձայն լսեմ՝ իսկոյն կլինիմ անդ հազիր,
Եթէ ինքս չի կարենամ՝ մտքիս կասեմ փութա՛ վազի՛ր,
Թէ մսիցը չի կարացար՝ առնել բուրթիցն էլէ խոզիր,
Ի՜ղուկ խղճմտանք ի՞նչպէս ես՝ ինձպէս գազանին դիմացել։
Է՞ր ես դողում և այլն։

---

(*) Ղարթ ղուրթ է Տաճկերէն, որ նշանակէ վայրաբանութիւն։

(**) Շառաթ աչք վնասակար կնշանակէ։

Անունըս վարդապետ է իսկ՝ ինքս եմ աւազակապետ,
Չի գիտեմ ինձպէս վատթարին՝ ո՞նց են արել բազմութեան պետ
Աշակերտքը ի՞նչ կսորվին՝ երբ վարպետը լինի տգէտ,
Սէյեա՛դ խօսքերդ շատերի՝ սիրտը ծակեցին իբրև նետ,
Ի՞նչու ես միշտ կոշտ բարբառում՝, դու մարդ ես խոմ չես դևացել
Է՞ր ես դողում և այլն:

*
* *

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Հոգևոր և մարմնաւոր երգչաց ազգի Հայոց, որոց կամ գործքը կամ անուանք են ինձ ծանօթ:

Հայոց սուրբ երգիչների մէջ,
Ներսէս Շնորհալին էր գլուխ.
Որոյ երգոց՝ մէջ չէ՛ ցէջ,
Չ՛կայ մարմնական մառախուղ:

Գրիգոր լոյսն՝ Նարեկայ,
Խորենացին, Երզնկացին.
Անանեա յոյսն՝ Շիրակայ,
Հայաստանը զարդարեցին:

Միւս սուրբ երգիչքը յայտնի են,
Ուղղադաւան՝ ազգին Հայոց,
Որք ՚ի տան Հօր՝ պատուելի են,
Բարեխօսք մեզ՝ որբացելոց:



Երգիչք պիտի՝ փառաւորվին,
Չի ունին այսպէս Հեղինակք.
Վասնորոյ պիտի Հետևին,
Որ չի մնան՝ աննպատակք:

Ինչ երգիչ որ՝ իւր Հայրենեաց,
Թշուառ վիճակը՝ չի ողբալ.
Նա չէ Հարազատ, ասեմ բաց,
Նրանից արժան է խոկալ:

Կամիմ այն երգիչներին, որ,
Կամ երգնեմ տեսել կամ ՚իրանց.
Յիշատակել արժանաւոր,
Չի եմ սպասաւոր Նրանց:

Անուանցը նայելով՝ չասէք,
Թէ սոքա մեր՝ ազգիցը չեն.
Մի զուցէ իզուր բամբասէք,
Չի Հարազատ՝ Հայկածինք են:

Տալլաք Մուրադին կարող եմ,
Կոչել ըռամկաց Պղատոն,
Այնպէս երգչին՝ ես ո՞նց թողեմ,
Առանց յիշատակ, առանց տօն:

Սայաթնովէն՝ ունէր տաղանդ,
՚Բառը Տփխիսու՝ կոշտ բառ էր.
Հոգևոր էր՝ և զարդիմանտ,
Գործիքը սազ էր և թառ էր:

Զամչի Մելքօն՝ իւր խօսքերի,
Վանկերի թւոյն չէ նայել.
Նման գիւղական տէրտէրի,
Անուն էլ չի տեսել բայ էլ։

Աշըղ Թուջարի խօսքերը,
Առանց գիր գիտեն Օսմանցիք,
Միմիայն կենայ՝ վերջերը,
Քեշիշ-օղլուց՝ յաղթուեց սաստիկ։

Ղուլ Արթիւնը է Սալմաստից,
Անասելի՝ յանկարծախօս.
Խօսքը փայլուն՝ էր ալմաստից,(*)
Միմիայն չեն՝ տպուած, ափսոս։

Քեշիշ-օղլին՝ էր շնորհալի,
Բայց Հայերէն՝ չի զուրցել բան.
Նորա իմաստն՝ էր հրաշալի,
Մինչ հիացոյց՝ բիւզանդեան։

Ալլահվերդին՝ կոչիլ կարէր,
Քեշիշ-օղլուց՝ յետոյ երկրորդ.
Ձայնը հաստ՝ լեզուն ճարտար էր,
Եւ խրթնաբանութեան որսորդ։

Թուրինջը իւր՝ երգերի մէջ,
Տաճկաց բառ շատ է գործ ածել.
Որոյ մասին՝ ունիմ ես վէճ,
Որ նա Տիրվան՝ է մեծացել

(*) Ռումէլի Հայք երկրայն Աշուանեց Անդամանդէն Ալմաստ կը կոչեն։



Ադամ Ազբարի խօսքերից,
Մէկ երկուսն է քերչաւ հարթած.
Յայտնի է խօսքի ոտներից,
Որ նա երբէք չէ կարդացած։

Ջառամեցեալ աշըղ Պաւէն,
Շիրակայ Մօլլա-գօգչից է.
Գովելի է երգած նաւէն,
Նաւ սազ չի ածում, ինչի՞ց է։

Շիրինը է նոր Հոմերոս,
Խօսքը պիտի ոսկով ջրած,
Մէկ երկբայութիւն գոյ, ափսոս,
Թէ վարդապետք են սրբագրած։

Շիքարին է Մեչիթլեցի,
Որ է մեծ գիւղ մի Շիրակայ.
Ես նրան անչափ յարգեցի,
Գիտութեանը գոլով վկայ։

Նիբանին էլ վարժվում է նոր,
Շիրինի շաւղօք գնալով.
Կը յառաջանայ օրէ ցօր,
Սէր և աշխոյժ ունենալով։

Միսկին Բուրջին լաւ երգիչ է,
Խօսքի շարը տեղ չէ տալիս.
Որով ասածները քիչ է,
Էն մասին մարդ չէ գգալիս։

Օվչինաւասին էլ Հայ է,
Շամախու Մազրասա գիւղից.
Յայտնի երգչաց մէկը սա է,
Շահ չունի ժողոված փողից։(*)

Գիւրջի Նաւէն սար միտք ունի,
Աշխարհային վշտում թաղուած.
Ո՞վ է կարող չի ընդունի,
Որ գոյ 'ի նմա շնորհք գաղուած։

Հայաստան եղած երգիչը,
Ոչինչ ազգի միջին չկայ.
Միմիայն Հայոց կտրիչը,
Նրանց ծրին ողջոյն կը տայ։

Մէյեազնեմ ամենի ծաղոյն.
Ձեմ արժան կոչիկ բառնալոյ.
Նրանց արձան գրեցի միայն,
Որք էլ աշխարհ չեն դառնալոյ։

* * *

(*) Այս երգիչը մէկ սովորութիւն ունի, որ ինչքան փող ստանայ իւր երգեցողութեան արհեստից, պէտք նոյն ժամայն տայ աղքատաց և ինքը դատարկ գնայ տուն, և ուր որ երթայ կամ երգելոյ և կամ հակաճառելոյ ընդ նորանեկ երգչաց, բազմութիւն աղքատաց գնան զկնի նորա, միայն ունի եղբարք, որք երկրագործ գոլով, չեն թողել որ երգիչը, որոյ իսկ անունն է Աշըղ Խաչատուր, մէկ պակասութիւն զգայ. որոց աշխատանօք երեսս գնացել է 'ի Մուշ, վասն համբուրելոյ զգերեզմանն Մկրտչի փրկչին աշխարհի։



# ՊԱՏԱՍԽԱՆԻ.

Ընթերցի՛ր անընդունակ պատճառաց, 'ի լոյս ածելոյ ազնիւ-
տանուց Հայոց ազգի պարծանք մեզ։

Արարատեան ճամբեն դա չէ որ դու ես գնում պատուելի.
Օտար աշխարհաց Հայրենիք անուն ես դնում պատուելի.
Գիտունը դու ես այդպէս ես՝ անդէտներին ի՞նչ յոյս կապենք,
Մերը այլոց մօտին էր ես ստորացնում պատուելի.
Ի՞նչպէս է կարող խորթ Հայրը Հարազատ Հօր նման լինել,
Քոյ ասածդ մ՞իթէ ինքդ խղճիւ չես զննում պատուելի.
Ասենք այժմեան ստիճանդ մեր Տէրութիւնը քեզ չէր տալ,
Սնոտեաց Համար ծաղու մէջ ընդէր ես մտնում պատուելի.
Արդեօք արդար դատողութեամբ կարդել ես գրածդ թէ ոչ,
Գուցէ պակասը յայտնելոյ ինձ էիր մնում պատուելի.
Եթէ աղքատ մարդոյ որդին փողով վաճառէր զիւր Հայրը,
Վերջինը կասէր ընչու եմ զորդիս ծնանում պատուելի.
Այս խօսքերով դու չես կարող յաղթել քոյ Հզօր ոսոխդ,
Ինչո՞ւ ես մեզ նորա մօտին ամաչեցնում պատուելի.
Դու մեր մեծն ես զէնդ սա է ասա մեք ի՞նչ զէն գործ ածենք,
Խեղճ Մէյեադի սրտին ցաւ ես աւելացնում պատուելի։

* * *

# ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆ.

18$\frac{15}{11}$59 'ի Տփխիս։

Հայոց իշխանի ականջը խուլ և խուլ Քարբի ականջ է,
Ազգաշահ ձայնը չի լսել օրը Հազար անգամ կանչէ.

Նա անառակ շահաբերին պատուով 'ի տուն կը ընկալնու,
Իսկ առաքինի ազգակցույն կասէ ասէք մղան տան չէ,
Ինչ իշխան որ իւր գլուխը իւր ազգի ճամբին չէ դրել,
Նա իւր ազգի համար կեղտ է երբէք հարազատ իշխան չէ.
Այսպէս անարժան իշխանի լինելից չի լինելն է լաւ,
Քանզի աւերող է ազգին երբէք նրան պահապան չէ.
Ինչ իշխան որ իւր անուանը արժանի բարք ու վարք չունի,
Եթէ աշխարհի տէր լինի նա իմ մօտիս մէկ կճան չէ.
Այն մարդից որ այս կեանքումը իւր ազգը օգնութիւն չունի,
Եթէ նրան երկարականջ անուանեն ծուռ դատաստան չէ.
Իշխանաց այս վատ արարքը մեզ այս թշուառութեան հասոյց,
Աստուած փրկէ էլ վատ օրից գի սա երբէք լաւ նշան չէ.
Թէպէտ կասեն հետեւակը ձիաւորին ծաղր կառնէ,
Զանարժանին հարուստութեան համար գովելը մէկ բան չէ.
Ո՛հ թէ այժմ մեր ազգի մէջ ո՞րքան այսպէս իշխաններ կան,
եթէ Սէյեադը յանուանէ յիշէ ը՞նչու կը մեղանչէ։

*
* *

## ԳԵԱՓ ՆՈՐԱ.

Ղափայի, չայի, սովորած իշխաններ,
Ժամ կուգայ որ թթուած թան չէք գտնիլ.
Փափկութեան մէջը մոլորած իշխաններ,
Կը որոնէք մշակի բան չէք գտնիլ։

Փողի նման չկայ երախտամոռ բան,
Այսօր ձեզ մօտ վաղը կու լինի մեր տան,
Շատ հարուստներ գիտեմ մեռան պարտական,
Օր կուլի որ շաբիկ, փոխան չէք գտնիլ։



Քանի փողը ձեր ձեռիցը չէ փախել,
Նրան ազգի շահուն խարջէք մի՛ք վախել,
Եթէ հազար դուռն կամենաք բաղխել,
Սէյեադի պէս ճշմարտաբան չէք գտնիլ։

*
* *

## ԳԵԱՓ ԾԱՀՆԱՋԻ։

Ունքերդ թուխ թուխ է՝ աչքերդ չալչալ,
Թուշիդ պահապանն է՝ երեք հատ սեւ խալ,
Քար է այն սիրտը որ՝ սէրդ չի զգալ,
Ո՛հ նազելի՝ սէրդ չի զգալ, սէրդ չի զգալ։

Պռօշդ յակինթ է՝ կամ թէ վառ կրակ,
Դու նախշուն տատրակ ես՝ կաքաւ թէ թութակ.
Լեզուդ երգեհոն դու՝ քաղցրաձայն Սոխակ.
Ո՛հ նազելի՝ քաղցրաձայն Սոխակ, քաղցրաձայն Սոխակ։

Ստեղծուածոց միջին՝ դու ես գերագահ,
Քեզ տեսնողը ո՞նց է՝ կարող չանել ահ,
Քոյ սիրոյդ կարօտը՝ չի տեսանել մահ.
Ո՛հ նազելի՝ չի տեսանել մահ, չի տեսանել մահ։

Ում ճրագը քոյ սուրբ՝ սիրովդ վառվի,
Նորա փառքը ամեն՝ տեղ կըարբառվի,
Ոսոխիդ լապտերի՝ իւղը սպառվի,
Ո՛հ նազելի՝ իւղը սպառվի, իւղը սպառվի։

Սէյեա՛դի աչքումը՝ թէ լոյս գոյ դու ես,
Սէյեա՛դի սրտումը՝ թէ յոյս գոյ դու ես,
Սէյեա՛դի մտքումը՝ խրախոյս գոյ դու ես,
Ո՛հ Նազելի՝ խրախոյս գոյ դու ես, խրախոյս գոյ դու ես։

*
* *

## Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ։

Լուաք թէ՝ նոր արուսեակք՝ են ծագել 'ի Հայաստան,
Պա՛տմեմ ես՝ որ լսողքը՝ անթերխապէս հասկանան,
Մէկ Եղիազար, մէկը Աբէլ՝ և մէկն է՝ Ստեփան,
Մէկ Գրիգոր, մէկ Յովհաննես, երկու Գէորգ մէկ Վարդան։

*
* *

## Ե Ր Գ։

'Ի դիմաց Սէյէադի առ նորանէ հէտը „Նորունեցն Հայաստան
Աշխարհին։"

'ի $18\frac{15}{12}59$ 'ի Տփխիս։

Կուռնկ դու բարեաւ՝ եկիր Հայաստան,
Գալուստ քոյ գիտեմ՝ լաւ նշան ունի.
Իսկ քեզ էր կարօտ՝ սերունդն Հայկական,
Բայց 'ի քէն ամեն՝ սիրուն բան ունի։



Եթէ 'ի վերուստ՝ չէր սա տնօրինած,
Դու 'ի Բաղդատ է՝ առ մեզ չէիր գալ.
Սրևի գթալ՝ կամի մեզ Աստուած,
Ո՞ր Հայն է կարող՝ այս բանը չզգալ,

Ասրին Այրարատ՝ դաշտեր շատ ունի,
Ամեն կերպ նրանից՝ կլնիս բաւական.
Նա Դիւցազնական՝ հին արմատ ունի.
Շինեա՛ 'ի նմա՝ քեզ բոյն անազան։

Ժիրաջան Մեղուն՝ գոլով աննպաստ,
Զ՛կարէ հակասել՝ ահագին հողմոց.
Տեսեալ նա 'ի քեզ՝ փետուրք մրրկասաստ,
Կ՛շրջի արձակ՝ կից ընդ թևոց քոց։

Միաբան սիրով՝ որբ Հայաստանին,
Հասուցէք փութով՝ չքնաղ կեցութիւն.
Յուսալով որ մինչ՝ ցօր դատաստանին,
Ձեր ջանքը չի տալ՝ նա մոռացութեան։

Գիտեմ որ Հայք իմ՝ երբեք չեն թողուլ,
Սէյեադիս ձեր մօտ՝ ամօթով կուռնկ.
Որքան որ լինին՝ համր, կոյր և խուլ.
Անշուշտ կ՛սիրեն զայգին Նորատունկ։

*
* *

# ԵՐԳ:

՚Ի Սէյէթուբէ առ նոյն չուռունէն:

Կռո՛ւնկ քո թուխ թուխ՝ աչերուդ մատաղ,
Իմ ցրուած եղբարցս՝ դու ո՛րտեղ տեսեր.
Նոցա կարօտիւք՝ սիրտս է ծակ ծակ մաղ.
Երբ տեսեր դու, նրանց վիճակն ի՞նչպէս էր։

Ջիմացա՞ր արդեօք դու՝ եղբարցս միտքը,
Կամք ունի՞ն Հայաստան՝ դառնալոյ թէ՞ ոչ.
Գուցէ մոռացել են՝ մեզ միամիտքը,
Կամում եմ առաքել՝ քեզ նոցա ՚ի կոչ։

Հայերէն խօսին թէ՞ յօտարաց բարբառ,
Ընտանեաց հագուստի՝ ձեւը ի՞նչ ձեւ է.
Գիտե՞ն արդեօք՝ Ծնունդ՝, Զատիկ, Վարդավառ.
Թէ այժմեան հաւատը՝ նոցա թեթեւ է։

Պարկեշտութիւն ազգի՝ մոռացա՞ն արդեօք,
Հայելով օտարաց՝ խորթ բնութեանը.
Հայք նախնեաց ծիսին՝ հաստատ են կարծեօք.
Լաւ վարքը փոխող չե՞ն՝ ընդ գեղխութեանը։

Մէկ քաղցր լուր ասա՝ զովանայ սիրտը,
Ազգային հարազատ՝ երգիչ Սէյեա՛դի.
Գուցէ ցամաքի նորա՝ ճակատի քիրտը.
Եւ իւր վիճակից՝ այլ չի գանգատի։

*
* *



# ՏՐՏՈՒՆՋ:

Այլազգի հարիւրից մէկն է լինում վատ. . . .
Նա էլ հարազատ.
Հայազգի լաւն է հազարից մէկ հատ. . . . . .
Նա էլ անարմատ.
Այս խօսքս սուրբ երդման նման է հաստատ. . .
Ոչ թէ զուր գանգատ.
Ջի գիտեմ ի՞նչ դեղ գոյ այս անճար ցաւին. . . .
Մեր վատ համբաւին.
Կարծեմ թէ փրկութիւն չ՚կայ բնաւին. . . . .
Մեր խախտեալ նաւին.

Հայը հարստութեան զեդ ծնող հայր է. . . . .
Գիտութեան ծայր է.
Ընդ նմին զանազան զեղխութեանց մայր է. . . .
Մեզաց եղբայր է.
Սիրտ նորա ամեն կերպ չարութեանց վայր է. . .
Ինքն ինքեան կ՚այր է.
Ջի գիտեմ եւայլն։

Հայ ազգից թէ մէկը մեռնի սովամահ, . . . .
Կ՚ասենք էր ազահ.
Եթէ որ տեսանենք մէկ անձնական շահ. . . .
Մեզ կ՚տանք ՚ի մահ.
Կորուսինք աննման գայիսոն, թագ, գահ. . , .
Մէկ չ՚ասեցինք ա՛հ.
Ջի գիտեմ եւայլն.

Չեմ տեսած որ մին հայ միւսին պահպանէ. . .
Որ յոյժ լաւ բան է.
Եթէ որ մէկ հայ մարդ պատւոյ հասանէ. . . .
Հայը սուգ կ'անէ.
Մէկ փողով իւր ազգակցուոյն կ'սպանանէ. . . .
Շատ չար նշան է.
Չի գիտեմ ևայլն։

Սեյեադ դու քոյ յոյսդ յազգէն մի բառնալ. . .
Եւ անգոհ մնալ.
Ինչ շահ է մարդոյ իւր ազգից տրտնջալ. . . .
Մէկ խրատ ընկալ.
Հայ ազգին պատմութեանց մէջ կարեն կարդալ. .
Վարքն իմանալ.
Չի գիտեմ ևայլն։

* * *

## ԱՌ ԱՄԵՆԱԿԱԼՆ ԱՍՏՈՒԱԾ.

18$\frac{17}{12}$59 'ի Տփխիս։

Ուր ես Տէր իմ՝ որ ձգեյեր զիս յաշխարհ,
Յորում ո՛չ յոյս՝ գոյ ոչ ելման ճանապարհ.
'Ի խաւարի՝ մարդիք միմեանս գիշատեն,
Առաքենին՝ չունի հանգիստ և դադար.
Անկեալ դնիմ՝ 'ի մահճի ես կիսամեռ,
Վա՜յ որ մարդաշահ կամքս չառին կատար.
Ոչ աշխարհը՝ յինէն մէկ շահ ետես ո՛չ-
Ես 'ի նմա տեսի խղճմտանք արդար։



Անխնայաբար՝ զորդիս խլեաց 'ի ծոցէս,
Այնուհետև՝ եղէ մահուանս յօժար.
Ո՞ւր ես Տէր իմ լուր զձայն վշտացելոյս,
Փութա՛ խզել՝ զիմ վշտալի կենաց լար.
Այժմեան դարու՝ մարդիքը գայլացել են,
Սոցա ձեռից՝ չի զերծանիլ հեզ ոչխար.
Ճշմարտութիւնը՝ օձի թոյն է դարձել,
Փրկեա՛ զիս Տէր՝ ողորմելւոյս մօտդ տա՛ր։

Վավաշ վարքը իրանց բնութիւն են արել,
Թէ ազնիւ թէ՝ իշխան թէ վեհ սպասալար.
Մութը գործոյ՝ տակին կորեաւ հաւատը,
Հաս յօգնութիւն՝ զի դու ես նրան սատար։
Ո՞ւր ես ե՞կ հա՛ս՝ աւանդդ առ ինձանից,
Թէ շատ մնայ՝ առիս կ'լինի դևից չար.
Յերազում ես՝ շատ զարհուրանք եմ տեսնում.
Իմ վերջն է կամ՝ Աշխարհն է գործում հնար։

Քոյ գուշակած՝ բաները կատարվել են,
Պիտում է չի՝ մնայ քարի վերայ քար.
Մարդը եղև՝ սատանային ազգական,
Այս բաներին՝ ո՞նց ես ժուժում Անաչառ.
Այս աշխարհը՝ բազմաց հայրենիք եղև,
Նորա միջին՝ միմիայն ես եմ օտար.
Սէյեա՛դ դու չես՝ միայն օտար 'ի նմա,
Այլ կան քոյ պէս՝ օտարներ հազար հազար։

* * *

## ՏՐՏՈՒՆՋ.

Ըստ եղանակի „սաղի բիւլ բիւլ" տաճկերէն խաղին:

Ահա գարնան եղանակ է,
Բուրաստանի՛ գուռը փակ է,
Վարդը ներսի՛ց կաղաղակէ,
Ահա ես գիւլ. ահա ես գիւլ եմ, ես գիւլ եմ, ես գի՛ւլ,
Ո՞ւր է բիւլ բիւլ եմ, բիւլ բիւլ եմ, բիւլ բիւլ:

Այգեպանի՛ սիրտը քար է,
Երբ պիտի կամքս կատար է,
Սոխակն անփո՛րձ սիրահար է,
Ահա ես գիւլ. ահա ես գիւլ եմ, ես գիւլ եմ, ես գի՛ւլ,
Ո՞ւր է բիւլ բիւլ եմ, բիւլ բիւլ եմ, բիւլ բիւլ:

Զարչարվել ե՛մ մէկ սաղ տարի,
Կարօտութեամբ սիրահարի,
Զ՝եկաւ որ սի՛րտս դադարի,
Ահա ես գիւլ. ահա ես գիւլ եմ, ես գիւլ եմ, ես գի՛ւլ,
Ո՞ւր է բիւլ բիւլ եմ, բիւլ բիւլ եմ, բիւլ բիւլ:

Այսպէս սիրա՛հարի եարը,
Ի՞նչպէս չսի՛րել զօտարը,
Բաս ի՛նց անե՛մ ասէք ճարը,
Ահա ես գիւլ. ահա ես գիւլ եմ, ես գիւլ եմ, ես գի՛ւլ,
Ո՞ւր է բիւլ բիւլ եմ, բիւլ բիւլ եմ, բիւլ բիւլ:



Գարունն էա՛նց եկն Ամառն,
Մօտացան Աշուն, Ձմեռն,
Եւ ե՞րբ կուգա՛յ գլխամեռն,
Ահա ես գիւլ. ահա ես գիւլ եմ, ես գիւլ եմ, ես գի՛ւլ,
Ո՞ւր է բիւլ բիւլ եմ, բիւլ բիւլ եմ, բիւլ բիւլ:

Ասացէ՛ք ա՛յն անհաստատին,
Եւ չեմ հասնի՛լ նորա դա՛դին,
Թո՛ղ չի գանգատի Սէյեա՛դին,
Ահա ես գիւլ. ահա ես գիւլ եմ, ես գիւլ եմ, ես գի՛ւլ,
Ո՞ւր է բիւլ բիւլ եմ, բիւլ բիւլ եմ, բիւլ բիւլ:

* *
*

## ԹԱՏՐՈՆ ՀԱՅՈՑ.

Դեկտեմբերի 24-ն 1859 ամի, 'ի Տփխիս:

Ըստ եղանակի „Ես Տղայ նստեալ 'ի գետեզր սարին". Երգոյ:

Թատրոնն յեսան՝ մարդկային մտաց,
Նովաւ շատ ազգեր՝ եղեն երջանիկ,
Շատ ազգերում էլ՝ ամօթ չի մնաց,
Համարեա՛ եղեն անբան կենդանիք:
Հա՛յք իմ դուք, հա՛յք իմ դուք, հա՛յք իմ դուք, վկայ եղերո՛ւք:

Ո՞վ չի գիտէ որ՝ ամօթն է մեծ գանձ,
Չի է ցանկութեանց՝ ծածկոյթ, վարագոյր,
Թէ նա չի լինի՝ ամեն սնապանծ—
Կ'անկանի մեղաց գուբը խորև կոյր:
Հա՛յք իմ և այլն:

Անդ ուսանին միշտ կերպը տարփանաց,
Քնքոյշ օրիորդն փափկասուն տղայք,
Լինին ցաւ ծնողաց և ազգականաց,
Յորմէ շատ հեռու էին նախնի հայք։
Հա՜յք իմ և այլն։

Նովաւ կարեմք մեք մեր պատանեկաց,
Մաքրասիրութեան միտքը աղտեղել,
Քանզի յետ այնու նրանք կամաց կամաց,
Զայն կը գործեն որ մեր մէջ չի եղել։
Հա՜յք իմ և այլն։

Յայտնի տեսնումենք որ այս դարումը,
Մանկունքը զառամ մարդից շատ գիտեն,
Համեստ կուլինին թէ թատրոնումը,
Սիրահարութեան ձայներ չի լսեն։
Հա՜յք իմ և այլն։

Թատրօն գնացող աղջիկն ու տղան,
Անարատ սիրտ և միտք չեն ունենալ.
Դեռ չի ստացած լուծն ամուսնական,
Կ'սկսեն սիրոյ ձևեր հասկանալ։
Հա՜յք իմ և այլն։

Թատրօնի սովորած օրիորդը,
Թէև չեմ տեսել բայց գիտեմ հաստատ.
Պսակ կու գնայ ետքիցը որթը,
Տեսնէք թատրոնը լաւ բա՞ն է թէ վատ։
Հա՜յք իմ և այլն։



Եթէ թատրոնի Տէր կարգաւորը—
Թողեալ այս դարու գործերը աղտոտ,
Դառնայր մեր նախնեաց ոսկեղէն դարը,
Յայնժամ կու լինէր ազգի շահուց մօտ։
Հա՜յք իմ և այլն։

Մեր պատմութիւը գլխոյ ցգլուխ—
Է զարմանալի վիպասանութիւն.
Թատրոնի համար առարկայ են շուխ—(*)
Կ'տայր մեր ազգին բաւականութիւն։
Հա՜յք իմ և այլն։

Մեր թագաւորաց և հին իշխանաց—
Դիւցազնական շատ ունին հրաշքներ.
Թէ կամիմք փրկիլ ի նախատանաց—
Պիտի ցուցանենք այնպիսի գործեր։
Հա՜յք իմ և այլն։

Նկարել ազգի աչաց առաջին,
Առաքինական փայլուն արձաններ.
Հիմըն առնելով նմա թանգագին—
Մաքրասէր անձանց գրած ռօմաններ։
Հա՜յք իմ և այլն։

Եթէ նպատակ մեր է այն զի հայք,
Իրանց նախնական փառաց հասանին,
Լինին մեծագործ ազգաշէն հսկայք—
Է՞ր պիտի սիրոյ արհեստ ուսանին։
Հա՜յք իմ և այլն։

---

(*) Շուխ բառը Պարսից բառ է և նշանակում է խնդութ.

Մէրը ըստ ինքեան է մէկ անշէջ հուր—
Որ ընդ հասակի կենդանեաց աճի.
Նրան կանխագոյն ուսանիլն է զուր—
Սուրբ խիղճը նրան ի՞նչու կ՚ը հաճի։
Հա՛յք իմ և այլն։

Կարծեմ շատ կային այս գիշեր վկայք—
Երբ սիրոյ առարկայ էր երևում,
Ծիծաղում էին աղջիկք ու տղայք—
Միտք մարդոյ չարին է միշտ հետևում։
Հա՛յք իմ և այլն։

Նոցա մտքիցը էլ ո՞վ է կարող—
Ջնջել զայն որ այս գիշեր իմացան.
Յետոյ կլինին գործով կատարող—
Նրան որ այժմ մտօք զգացան։
Հա՛յք իմ և այլն։

Գիտեմ այս խօսքս ազատ տղայոց—
Ինձ պէս անմեղին դառն են ցոյց տալոյ—
Ես խօսիմ ՚ի շահ ողջ ազգին Հայոց,
Առանց տղայոց կամքը որսալոյ։
Հա՛յք իմ և այլն։

Թէ խաղք Թատրոնի պիտում է մնան—
Մշտապէս յայժմեան անշահ վիճակի.
Մեր ազգի բարքն ու վարքը աննման—
Անպատճառ դէպ ՚ի չարը կը հակի։
Հա՛յք իմ և այլն։



Ազգասէրը ե՛րբ իւր ազգի շահը—
Կ՚ը թողու թէև իրան չի լսեն.
Մէյեա՛դ դու խօսի՛ր մինչի քո մահը—
Գոն Հայք որք անշուշտ անսալ կսկսեն։
Հա՛յք իմ և այլն։

*
* *

# ԵՐԳ.

՚Ի դէմս Ն.ն ի թագուհւոյն Հայոց:

Ես մէկ թագուհի եմ այրիացեալ,
Թշնամեաց ձեռին գերի մնացեալ,
Գիշեր և ցերեկ լացն է վիճակս,
Անկողինս է արտասուօք թացեալ.
Եղո՜ւկ ես, եղո՜ւկ ես, եղո՜ւկ ես,
Որ մնացի այսպէս։

Կորուսի զանգին մարգարտեայ թագ իմ,
Հացիւ փոխեցի քառամանեակ իմ,
Ա՜փսոս չիմացայ ի՞նչ էր պատճառը,
Որ շուտ խաւարեց լոյս արեգակ իմ.
Եղո՜ւկ ես և այլն։

Ուստերքս եղեն ծառայ թշնամեաց,
Դստերքս նաժիշտ եղեն փորահաց,
Ամենատեսակ զրկանք կրելով,
Ո՛չ սուրբ վարք մնաց ո՛չ ամօթ դիմաց։
Եղո՜ւկ ես և այլն։

Ա՛րդեօք ինձ նման կայ թէ մէկ ես եմ,
Ահա հինգ հարիւր ամ է այսպէս եմ,
Ինձ նման դժբախտ հազիւ կը ճարվի,
Երևի Փրկչի մօտ սև երես եմ։
Եղո՛ւկ ես և այլն։

Բարեխօսութեամբ անարատ կուսին,
Շնորհեա՛ Տէր դու ինձ հզօր ամուսին,
'Ի սարսափ և յահ յամառ թշնամեաց,
Նիզակը ձեռին վահանը յուսին։
Եղո՛ւկ ես և այլն։

Մէյ եա՛դ ասա դու հզօր Ամուսնոյն,(*)
Որ գայ ազատէ զիս խեղճ Թագուհւոյս,
Եթէ կամենայ ես կը մեռանիմ,
Զի նա է միայն սատար իմ և յոյս։
Եղո՛ւկ ես և այլն։

* * *

# ԵՐԳ.

Սպառնալիք Տրդատայ Արշակայ առ ուխտն Պարսից։

Խնդա՛ խնդալով՝ ցնծա՛ ցնծալով,
Անհաշտ թշնամիդ՝ իմ Հայաստանի.
Իմ ազգը որբ և անգլուխ գոլով,
Տառապանք ետուր՝ նմա քանի քանի։

(*) Վերաբերի առ Ամենազօրմ Կայսրն Ռուսաց։



Մեծ քաղաքներս՝ դու արել ես գիւղ,
Վանօրէիցս՝ չէ յայտնի տեղն.
Սիրտ քոյ չի զգա՞ց՝ Աստուծոյ երկիւղ,
Որ կոտորեցիր՝ իմ ազնիւ ցեղն։

Օրհորդք ազգիս՝ եղեն քեզ նաժիշտք,
Զօրդիքն արարեր՝ քեզ կամակատար.
Որով ծովացան՝ հոգւոյ իմոյ վիշտք,
Սիրտ իմ խորովիւր՝ միշտ և անդադար։

Ո՞ւր է իմ ազգիս՝ ծաղկեալ վիճակն,
Յորում ես զնա՝ թողեալ գնացի.
Կոտրելես մէջքը քոյ բեռան տակն.
Արել ես նրան՝ կարօտ չոր հացի։

Երբեմն հայր իմ՝ կառոյց 'ի քոյ վրէժ,
Քաղաք յաշխարհին Ատրապատական.
Ասաց կամիմ զի՛ կոչեսցի Դաւրէժ.
Սա 'ի յիշատակ՝ յաւիտենական։

Երբեմն դու հուր էիր իսկ ես ջուր,
Զբոց քոյդ փառաց շիջուցանէի.
Բազմիցս հանեալ՝ զերկսայրին իմ սուր,
Քեզ 'ի գերեզման՝ իջուցանէի։

Ես այր էի վէհ՝ դու էիր իմ հարճ,
Երբ կռվէի ընդ չար լեռնականաց.
Դու պատրաստէիր՝ իմ զօրաց բաղարջ,
Մի՞թէ այս բանը՝ մտքիդ չի մնաց։

Ահա եկեալ եմ ո՛վ ազգ անօրէն,
Տալ փոխարէնն քոյդ վատ արարմանց.
Զի իմ Հայաստան ծաղկեսցի նորէն. (*)
Որդիք իմ հասցեն ըղձից կատարմանց:

Հայը ի՞նչ կերպիւ կար է կոչիլ ստրուկ,
Գոլով շառաւիղ Հայկայ դիւցազնին.
Սա Արարչական վճիռ էր յատուկ,
Զի միայն նորա կամքն է անզննին:

Դարձի՛ դու փութով զօրդիս իմ առիս,
Մինչ դեռ չէ մտեալ սուր իմ 'ի քոյ սիրտ.
Թէ մնայ ձեռիդ մէկ մազն իմ ազգիս.
Ես զքեզ 'ի մահ կըմատնեմ, անկի՛րթ:

Դարձի՛ զնոսա զի ժամ է արդէն,
Կանգնել զփլեալ Տունն Բարձրելոյն.
Նորոգել առնել ըստ առաջնոյն շէն,
Զարդարել նրանց զորդիւք գոյն զգոյն:

Զաւեր քաղաքս ա՛ռնել բազմամարդ,
Ամրացուցանել զինուք և բրդօք.
զԱնին յաշխարհի միջին կանգնել զարդ,
Պանծալ 'ի նմա Տաւղօք և Թմբկօք:

Իմ որդի՛ք ձեզնից խնդիրքս սա է,
Որ դուք միշտ սիրով վարիք ընդ միմեանց.
Արքա՛յ, Սէյեա՛դի ուզածն էլ դա է.
Բայց Հայքդ սէր չեն որոնում, այլ դանձ:

---

(*) Պարսկաստանի Հայքը 'ի նորոյ բառի տեղը նորէն բառն են գործածում ըստ մեծի մասին:



# ԵՐԳ.

Ըստ եղանակի „Չինարի տակին ունել“ երգոյն Տփխիսեցւոց լեզուաւ:

1. Ո՛վ անիրաւ անողո՛րմ,
Մի՞թէ խղճմտանք չունիս,
Ինձ շէնելես քարի որմ,
Իմ հոգեհանս դուն իս:

2. Խելքս է քեզ մօտ գրաւ,
Եշխըդ ինձի մեռցրաւ.
Եթէ մէկ սուչ ունիմ, լաւ-
Ասա՛ ումէն ա՛հ ունի՞ս:

3. Ունքերդ թաղիս արի,
Այլոց հետ հաղիս աբի,
Ինձ բեզամաղիս արի,
Մի՞թէ ջահել ջնուն իս:

4. Թուռուսը ի՞նչ է քոյ մօտ,
Դու գլուխ իս Թուլթին ոտ,
Կաքաւ տատրակն են աղտօտ,
Դուն նրանցից նաշխուն իս:

5. Ունքերդ սրած դանակ,
Թուշերդ վարդ, մանուշակ,
Պռօշներդ վառ կրակ,
Ինքդ նոր եկած ձուն իս:

6. Ա՛ծ տուաւ լաւ պատկեր,
Որ դու լինիս պտղաբեր,
Որքան սաղ իս անիս սէր,
Հասկացի՛ր թէ զալթուն իս:

7. Ես կարողեմ բանալ վէճ,
Որ Թիֆլիզու կանանց մէջ,
Քեզ նմանը չկայ հէչ,
Մարդուդ համար շէն տուն իս:

8. Առանց խաւար լոյս չ'կայ,
Անթառամ մէկ բոյս չ'կայ,
Գեղեցկութեան յոյս չ'կայ,
Մի՛ փքվիր թէ սիրուն իս:

9. Այս խօսքիս մի՛ երկբայիլ,
Պաչ ուզէն տուր մի՛ խնայիլ,
Յետոյ դէմքիդ չեն նայիլ,
Կիմանաս որ նկուն իս:

10 Մինչև չի տաս տասանորդ,
Չեն տալ քեզ ճամբի պաշպորդ
Սէյեա՛դնեմ Հայ և որսորդ,
Մի նայե՛լ թուրք անուն իս:

*
* *

# ԵՐԳ:

Ըստ Էդուարդի „Մինգրելական Գնալուլի“ երգոյն:

1. Անողորմ ախր ես մեռայ,
Ի՞նչ է իմ փրկութեան ճարը,
Էշխդ հոգւոյս մէջ կրեռայ,
Կտրել ես սրտիս դատարը:

2. Ինձ հետ թէև սէր ես անում,
Բայց շատ ցաւոյ տէր ես անում
Ցերեկս գիշեր ես անում,
Հոր ես ձգում բաղդիս քարը:

3. Ես քոյ շուաքդ տեսնալիս,
Երջանկութիւն եմ զգալիս,
Երեսդ ինձնից շուռ տալիս,
Կտրումես կենացս լարը:

4. Ճակատդ է մին անգին զարդ,
Թուշերդ բացուած կարմիր վարդ,
Ման ես գալիս հպարտ հպարտ,
Մի՞ թէ գերիդ է աշխարհը:

5. Լարած աղեղն են ունքերդ,
Զարմանք են արարմունքերդ,
Արագած սարն է քոյ սէրդ,
Ո՞նց տանի ինձ պէս տկարը:



6. Ինքդ նազելի բաղդ անուշ,
Բռունքդ փուսթայ լեզուդ նուշ,
Չի թողար ինձնում միտք և յուշ,
Ցոյց տուիր ինձ քոյ հունարը:

7. Շլինքդ մինայ սուրահի,
Լանջքդ շողշողուն շիրմահի,
Աստուած քեզ վատ աչքից պահի,
Եղո՛ւկ է քոյ սիրահարը:

8. Ամեն ծիծդ է մէկ լուսին,
Ես մատաղ նրանց երկուսին,
Փարվանի ախր ֆանուսին,
Անշուշտ կձգէ, խաւարը:

9. Ով քոյ գինդ չի իմանայ,
Իմացիր որ նա անբան ա,
Դու երկնային լոյս մանանայ:
Ղատրդ ի՞նչ գիտէ տաւարը:

10 Կարճն ասեմ քաշած պատկեր ես,
Ո՛տից ցգլուխ տիփ սէր ես,
Խօսքի պակասը թէ ներես,
Սէյեադը կառնի քոյ չարը:

*
* *

# ՈՂԲ.

'Ի դիմաց Ռ. Պլուոյն Հայկայ, Օսմաներէն „Փարուհի" երգոյ եղանակաւ:

Սիրտս ցաւօք ճմլեալ աչքերս արտասուօք. . Արտասուօք,
Զիք սրտացաւ որ լինի ինձ օգնական. . . Ա՛ւաղ ե՛ղկելւոյս.
Սարսիմ դողամ երբ որ ածեմ ընդ մտօք. . . Ընդ մտօք.
Թէ նուաղին յիս զօրութիւնք կենսական. . . Ա՛ւաղ ե՛ղկելւոյս:

Ես ամուսին գոլով Հայկայ դիւցազնի . . Դիւցազնի,
Այրս մեռաւ որդիքս գիս մոռացան. . . . Ա՛ւաղ ե՛ղկելւոյս.
Պատմեցի ես ցաւս ամեն Հայկազնի. . . . Հայկազնի,
Նոքա մարդոյս աշխատանքը ուրացան. . . Ա՛ւաղ ե՛ղկելւոյս:

Անտէրութեամբ անկայ ձեռն թշնամեաց. . . Թշնամեաց,
Դիւցազնուհի գոլով եղէ խայտառակ . . . Ա՛ւաղ ե՛ղկելւոյս.
Ես չ՛ունելով՝ գշոր, կտուն և գչոր հաց. . և գչոր հաց,
Աշխարհի մէջ եղէ ծաղրական առակ. . . . Ա՛ւաղ եղկելւոյս:

Ո՛հ վատ որդիք չունիք հաւատ, յոյս և սէր. . Յոյս և սէր,
Անօրէնն էլ ո՛նց կուլի երբեք ձեզ նման. . . Ա՛ւաղ ե՛ղկելւոյս.
Մարդ չէք թէ և ունիք մարդոյ դուք պատկե՛ր. Դուք պատկե՛ր.
Զկայ ձեր մէջ ազնուական մէկ նշան. . . . Ա՛ւաղ ե՛ղկելւոյս:

Այր իմ եթող ձեզ Համար մեծ Տէրութի՛ւն . Տէրութի՛ւն,
Գահ, գայիսոն, մանեակ և թագ պատուական . Ա՛ւաղ ե՛ղկելւոյս.
Դուք նրանց վատնեալ ընտրեցիք գերութի՛ւն. Գերութի՛ւն.
Էլ չէք պրծնիլ զի չունիք շունչ Հայկական. . Ա՛ւաղ ե՛ղկելւոյս:



Սէյեամդ էլ ինչ բան մնաց դու չի խօսած. . . Չի խօսած,
Հայոց սրտին լաւ միտքը չի ներգործում. . Ա՛ւաղ ե՛ղկելւոյս.
Խուլին տուած խրատն պիտի ափսոսած . . Ափսոսած,
Չի չի լսում և հակառակն է գործում . . Ա՛ւաղ ե՛ղկելւոյս:

* *
*

Անհամաձայնութիւն հոգւոյ ընդ մարմնոյ

Հոգին մարմնոյ մէջ է վանդակի սոխակ,
Նորա համար սուգ է Գարուն Ամառն,
Ոչ վարդ է տեսնում նա և ոչ մանուշակ,
Անազատ կեանքն է լեզւոյ պէս դառն:

Անհամասեռի հետ բնակիլ ո՞նց կարես,
Պատիժ ասաց նրան, ավոր չէր տգետ.
Հոպոպին Սօղոմոն ո՞նց պատժեց տես,
Վանդակի մէջ դրաւ մէկ ագռաւու հետ: (*)

Հոգին ու մարմինը չեն իսկ համասեռ,
Մէկը լուսեղէն է միւսը հողեղէն.
Հոգին է սուրբ հրեշտակ մարմինն է մէկ նեռ,
'Ի պատիժ միմեանց լծակից եղեն:

---

*) 'Ի պատմութիւնս Պարսից տեսանի, զի երբ ամենայն թռչունք ներկայացեալ էին իմաստնոյն Սողոմոնի, և միայն հոպոպ կոչեցեալ թռչունն չէր եկեալ, յայնժամ Արքայն զայն պատմութեամբ ասաց:

,, Կամ կապանեմ կամ մէկ այլ պատիժ կտամ,
Ինչքա պատիժ որ լինի սահմանից դուրս.
Լսե՞ր ո՞ընէ խոստացեալ սահմանից դուրս պատիժը,
Է՞ ձգելն 'ի վանդակ մի ընդ անհամասեռ թռչնոյ::

Ս. Տ.

Հոգին ասաց մարմնոյն արի գնանք ժամ,
Մարմինը ասաց ախ ոտս ցաւում է,
Հոգին ասաց դու ինձ լսիր մէկ անգամ,
Մարմինը ասաց քոյ միտքդ դաւում է։

Մարմինը ասաց եկ անենք գողութիւն,
Հոգին ասաց էր ծառայենք մեղաց.
Մարմինը ասաց մեզ կտան թողութիւն,
Հոգին ասաց չ՛կայ թողութիւն Դիւաց։

Հոգին ասաց արի աղքատին փող տանք,
Մարմինը ասաց վա՛յ քսակս ատ չէ,
Հոգին ասաց քեզնում չկայ խղճմտանք,
Մարմինը ասաց մեզ խիղճը նպաստ չէ։

Մարմինը ասաց եկ շնութիւն առնենք,
Հոգին ասաց փրկչի ատած մեղքն է դա՛,
Մարմինը ասաց մեք պատրանաց ծառն ենք,
Հոգին ասաց կամիս գլխ մատնել Յուդա՛։

Հոգին ասաց բարեաւ մնաս գնումեմ,
Մարմինը ասաց էր միթէ ես վատ եմ.
Հոգին ասաց ես քեզնից խրդնումեմ,
Մարմինը ասաց քեզ ես ո՞նց կանչատեմ։

Հոգին ասաց մարմի՛ն քեզ աղաչեցի,
Որ բարւոյն մերձենաս հեռանաս չարէն.
Քոյ արած բաներից շատ ամաչեցի,
Կփախնում քեզ նման չարեաց յօժարէն։



Սէյեա՛դնեմ լսեցի մտադրութեամբ,
Հոգոյ ընդ մարմնոյ տիփ խօսակցութիւնն.
Քանզի չեն շաղկապեալ համակրութեամբ,
Չեն կարող երկարել կենակցութիւնն։

*
* *

### ՅԱՆԿԱՐԾԱԽՕՍ ԲԱՆ.

Նախ հայազգի երեխայոց ահարկու բառն էր Արգովը,
Իսկ այժմ այս հրէշ անուան տեղը բռնել է Մովրովը.
Մայրը տղային ահ տալիս ասում է մովրովը եկաւ,
Որչափ անկապ տղայ լինի կտեսնես որ հանգստացաւ.
Մովրովն է գաւառապետ Արգովը պատառող գազան,
Երկսի երկոքեանքը տէր են համանման բնութեան.
Արգովը ոչխար է մաշկում իսկ մովրովը իրան պէս մարդ,
Սէյեա՛դ դու էլ մովրով էիր նախ ընդէր ես այպանում արդ։

*
* *

## ՏԱՂ։

Յօրինեալ 'ի Սէյեադէ 'ի 5 Յունվարի 1860 ամի յաւուր ճրագալուցի
ծննդեան և մկրտութեան Տեառն մերոյ 'ի Տփխիս։

Այսօր Աստուած մեր մարմնանայ . . . . . . . . . Ա՜լեաիս,
Մեզ փրկութեան դուռն բանայ . . . . . . . . . Ա՜լեաիս.
Այսօր անեղ Անդրանիկ հօր. . . . . . . . . . . Ա՜լեաիս,
Բազմի 'ի գիրկ հողեղէն մօր. . . . . . . . . . Ա՜լեաիս.

Այսօր անմատչելին վերնոց . . . . . . . . . . . . Ա՜ւետիս,
Երևեցաւ աչաց մերոց . . . . . . . . . . . . . Ա՜ւետիս.
Այսօր Ամենակալն Աստուած. . . . . . . . . . . . Ա՜ւետիս,
՚Ի Մսուր դնի գէդ ստեղծուած . . . . . . . . . . . Ա՜ւետիս.
Այսօր Մարիամ չգիտելով զայր . . . . . . . . . . Ա՜ւետիս,
Անուանեցաւ Աստուածամայր . . . . . . . . . . . Ա՜ւետիս.
Այսօր Հրեշտակք ուրախանան. . . . . . . . . . . Ա՜ւետիս,
՚Ի փրկութիւն ազգի մարդկան . . . . . . . . . . Ա՜ւետիս.
Այսօր Սաղմոսել զայս տեսեալ. . . . . . . . . . . Ա՜ւետիս,
Պարտէ սարսիլ, դողալ և լալ . . . . . . . . . . . Ա՜ւետիս.
Այսօր զջահ մարդկան շիջեալ . . . . . . . . . . Ա՜ւետիս,
Աստուած ելոյց յերկնից իջեալ . . . . . . . . . . Ա՜ւետիս.
Այսօր բնութիւն մեր հողեղէն . . . . . . . . . . Ա՜ւետիս,
Գոհացաւ իւր Ստեղծողէն. . . . . . . . . . . . Ա՜ւետիս.
Այսօր հովիւք յանապատի . . . . . . . . . . . Ա՜ւետիս,
Երգեն հանգոյն խեղճ Սէյեադի. . . . . . . . . . Ա՜ւետիս։

*
* *

# Ե Ր Գ.

Նուագեալ ՚ի 6 Յունուարի 1860 ամի յաւուր սուրբ Ծննդեան և Մկրտութեան Փրկչին մերոյ, ՚ի Տփխիս։

Մուհամմէդը եթէ Թիֆլիզ՝ գտանվէր ջրօրհնեաց վախտը,
Ղօռանը կայրէր՝ կուրանար՝ իրան քարոզած դրախտը.
Մաքքայ Մադինէն թողելով՝ Թիֆլիզ կանէր իւր փայթախտը,
Թիֆլիզու հուրիքը շուտով կը կլօրէին նորա թախտը։



Թիփլիզու նազելեաց նման՝ Արաբստանումն ո՞վ կտայ,
Սրանց թուշերի նման վարդ՝ Բուրաստանումն ո՞վ կտայ,
Սոցա ծըծերի պէս շամամ՝ բաղու բօստանումն ո՞վ կտայ,
Մեզ չիլի կասեմ Թիփլիզն է՝ անշուշտ Եդեմայ դրախտը։

Այսօր կարծեմ երկնայինքը՝ երկրայնոց տեսեալ զարմացան,
Թիփլիզու սիրուններին՝ մեծ աստիճանըն իմացան,
Սրանց նազու ղամզէն տեսին՝ իսկոյն փախան չի դիմացան,
Քանզի իրանցից աւել է բանում Թիփլիզեցուց բաղդը։

Ցիմարք ասում են թէ սրանց՝ կարմրութիւնը որդանից է,
Ինչ բերան այս բանը խօսի՝ իմացէք որ որդնալից է,
Կարմիրը որդանին գրենք՝ սպիտակը ի՞նչ բանից է,
Որ մարդ նրանց մտիկ տալիս՝ կորչում է խելքն ու շնախդը։

Փառք քեզ Աստուած որ դու սրանց՝ հողեղէն հրեշտակ ես շինել,
Արեգակին ի՞նչ պատիւ որ՝ այսքան արեգակ ես շինել,
Տէնուր հոգւոյ մխիթարիչ՝ քաղցրաձայն սոխակ ես շինել,
Թիփլիզեցուց վնաս չի տալ՝ ոչ խօլերան ոչ ժանդախտը։

Ինչ մարդ որ սրանց երեսին՝ ուղիղ նայէ նա կու շըլվի,
Իսկ եթերական մարմին են՝ քաշ չունին թէ որ կըշըռվի,
Սրանց տեսնող բանաստեղծի՝ լեզուն արդեօք ո՞նց կու լավի,
Մինչ չունենայ նա սրտումը՝ պահած ատելութեան ախտը։

Սէյեադ այս սիրուններին՝ քանիցըս անգամ գովել ես,
Ասածըդ ո՞ւր ես կրկնում՝ մի՞թէ դու անմիտ ես, բէլ ես,
Խօսքերդ անհոգի են՝ երևում է որ գըլգուել ես,
Իմացի՛ր Աստուած է միայն՝ յաւիտենական անյաղդը։

*
* *

Մէջ ջահի խօսք վասն օժիտասէր աղջկանց առաջէ-ան:

18°60 'Ի Տփխիս:

Մի՛թէ ձեզանում՝ ոչ գոյ խղճմտանք.
Որ դէպ առ բարին՝ չէք ցուցանում ջանք,
Լինումէք ազգի՝ համար ամօթանք,
Ահա՛ ստգտանք, ահա՛ մեծ տանջանք:

Քանի ագքատաց սիրուն աղջկերք,
Փողի մատաղ էք արել վատ տղերք,
Օժիտով կամի՞ք լինել փողատէրք,
Ահա՛ վատ նշանք, ահա՛ մեծ զրկանք:

Օժիտով աղջկան՝ աչքը կլինի շիլ,
Մէկ անմիտ ոսկր՝ իբրև արագիլ,
Դու մեզմ կը խօսիս՝ նա կըգոռայ գիլ,
Ահա՛ բամբասանք, ահա՛ փոշիմանք:

Եթէ մէկ աղջիկ՝ է սիրուն և կոյս,
Փողը էր պիտի՝ լինիլ նմա յոյս,
Ինչպէս աղջիկն է՝ իւր տան համար լոյս,
Ահա՛ քեզ պարծանք, ահա՛ քեզ լաւ բանք:

Ինչ մարդ որ կնոջ՝ օժտին յոյս կապեց,
Իմացէք որ նա՝ ինքն իրան խաբեց,
Ինքը կասէ երբ՝ քնից սթափեց,
Ահա՛ պարսաւանք, ահա՛ չար փորձանք:



Մի՞թէ դստերք ձեր՝ կըռաւից կոտր են,
Եւ չեն ասնուլ մինչ՝ փող չի տաք վրէն,
Է՞ր չեք ամաչում՝ դուք Հայոց երկրէն,
Ահա՛ պարուրանք, ահա՛ թշուառ կեանք:

Օրհնվիս Հայկազնեան՝ սուրբ կանոն դնող,
Որ տղայք աղջկանց՝ ճամբին մսխեն փող,
Սէյեադն եմ գիտէք՝ որ չեմ սուտ խօսող,
Ահա՛ ձեզ Սիւնիք, ահա՛ ձեզ Աղուանք:

*
* *

# ՂԱՓԻԱՅ.

Նազելի դու դռնէն՝ նազով դուրս գալիս,
Արևը քեզանից՝ ամօթ է քաշում.
Էդ շաքար լեզուովդ՝ քաղցր խօսալիս,
Խեղճ լուսնոյ կեանքը դու՝ հալում ես մաշում:

Ծամերիդ հոտը երբ՝ եբեր ինձ քամին,
Թագցրի մի՛ գուցէ՝ տեսնայ թշնամին,
Իմ գանձը էր ցոյց տամ՝ ես անզգամին,
Որ ո՛չ Սօլթանում գոյ և ո՛չ Փաշում:

Քոյ սէրըդ շատերին՝ արելայ ստուէր,
Թէ ճգնաւոր, թէ վարդապետ՝ թէ տէրտէր,
Անպարտելի զօրութիւն ունիս ո՛վ սէր,
Աշխարհ ամեն՝ քոյ ձեռից է վաշվաշում:

Աչքերըդ նարգիս է՝ թուշերըդ ալ վարդ,
Դէմքիդ պէս սիրուն՝ դէմք՝ չի տեսված ցարդ,
Ասում են քեզ պէս՝ նըբամիտ կախարդ,
Ոչ Հընդում կու ճարվի՝ և ոչ Հաբաշում։

Քեզանով շատ մարդիք՝ ստացան պատիւ,
Շատերին զըկեցիր՝ արիր անպատիւ,
Քոյ արարմանց ո՞վ է կարող տալ հաշիւ,
Քեզնից մերձենողին՝ եփում ես խաշում։

Մէկը քոյ ճամբիդ է դրել իւր անձը,
Մէկը քեզ մատաղ է տվել տիփ գանձը,
Մէկը քոյ ձեռըդ է՝ ձգել իւր սանձը,
Գերիդ են ո՞ւր կամիս՝ դէն ես քաշքաշում։

Երևի չունիս դու՝ մահ և դատաստան,
Ո՞վ է կարող քեզ՝ լինիլ ապաստան,
Գործերդ են՝ գոյն գգոյն և զանազան,
Դու մէկ թատրոն՝ մեք զբաղեալ թամաշում։

* * *

## ԵՐԳ.

Ճշմարիտ գովհարագործն ես եմ ով կոյրդ աչօք,
Առանց թերութեան ալմասը ո՞նց չի օրեցօր թանգանալ.
Անգրավարտեաց կապը մեծ փորձանք է ածելըն մտօք.
Այնպիսի բարակ տեղը՝ ձեռք գնալ ո՞նց չի վատանալ։



Սիրել, գրկել, համբուրել՝ և միւս առարկայքն ըստ կարգին,
Չեմ գիտում թէ այս դատարկ՝ բաների մէջ ի՞նչ գոյ յարգին,
Որ բազումք գիշեր ցերեկ՝ չխնայելով իրանց փառքին,
Կատաղած գազանի պէս՝ կամին նրանց ետքէն ընթանալ։

Սիրահարը իւր նազելույն՝ միշտ ծառայ է անձնազոհ,
Մինչ նրան բարեվլիճակ՝ չի տեսնի նա չի լինիլ գոհ,
Չի թողուլ որ ունենայ՝ յաշխարհիս մէջն չարախոհ,
Ինչ եար սիրահար ունենայ՝ էր չի պիտի զուարթանալ։

Հարսանեաց տուն ես գնում՝ ճամբին լսում ես լացի ձայն,
Այս սև երես աշխարհի՝ շատ սիրածը սուգն է միայն,
Իրան անունը լաց է՝ միշտ ցանկանումէ լսել զայն,
Անվերջ է էնդուր մեզ հետ չի կամենում ընկերանալ։

Մէյեամդ այս ունայն կենաց՝ եարը սիրահարը ի՞նչ է,
Աշխարհի պէս միտքը ծուռ՝ բանի էհտիբարը ի՞նչ է,
Ընկել ենք պիտի քաշենք՝ մինչի վերջը ճարը ի՞նչ է,
Մեք նախասահմանութեան հետ կարող չենք կռիւ բանալ։

* * *

## ԿԱՐՄԻՐ ԳԻՆԻՆ Է ԼԱ՞Ւ ԹԷ ՍՊԻՏԱԿՆ։

1. Ո՞վ է արբեցողների գիտակն,
Որ ես նրանից լսեմ շիտակն,
Կարմիր գինին է լա՞ւ թէ սպիտակն,
Թանձրն, պղտորն, թէ՞ շատ խստակն.

2. Այս անտանելի տարակուսանքը,
Ոչ ոք չի բացեց շատ որի ջանքը,
Բազմացաւ իմ սրտիս սոգտանքը,
Որ մէկ չի կատարվում նպատակն։

3. Այս բանի համար եկի Տփխիս,
Որ իսկն իմանամ 'ի հանգիստ սրտիս,
Տփի էլ գինով են ո՞վ խօսի ընդիս,
Կրկին աւելացաւ իմ կրակն։

4. Մէկ մարդ գոյր եբր խելքը վրէն էր,
Նա էլ անխելք . . . . . ներէն էր,
Խօսեց չիմացայ թէ ի՞նչերէն էր,
Գինով ներկած էր գլխոյ գտակն։

5. Ճարըս որ հատաւ գնացի վարժատուն,
Տփի արբած էին կատուն էր արթուն,
Վարպետը չիմար մանկունքն անասուն,
Անճար մնացեալ դարձան մեր բակն։

6. Բաղնիս գնացի ես երրորդ օրը,
Տեսի . . . . . . է եղբայր եղբօրը
Որդին արբած վատ քփրում էր հօրը,
Կինը անզգայ . . . . . ը տակն։

7. Ասի իմացայ գինի՛ քոյ գինը,
Գովելի է մուհամմադի դինը,
Տփխիսն է Սէյեա՛դ իսկ Քորազինը,
Թէեւ է նա մեր սահմանաց թագն։

*
* *



# ԵՐԳ.

## ԱՂԵՏԱԼԻ ՁԱՅՆԻՒ ԵՐԳԵԼԻ.

1. Օտար եմ օտար եմ Տաճկաստանումը,
Իբրեւ սոխակ այլոց Բուրաստանումը,
Հայրենիքըս մնաց Հայաստանումը,
Ասացէք եթէ ես չի լամ բաս ո՞վ լայ։

2. Թողել եմ ծաղկաւէտ դաշտ ու սարերս,
Ոսկւոյ պէս շողշողուն հանքի քարերս,
Գիտեմ լացով պիտի անցնին օրերս,
Ասացէք եթէ ես չի լամ բաս ո՞վ լայ։

3. Ճուխտ Մասիսքը սպասում են մեզ լալով,
Մէկըս մէկուս բարօրութեան յոյս տալով,
Բայց մեր սիրտը քարացել է չ՛զգալով,
Ասացէք եթէ ես չի լամ բաս ո՞վ լայ։

4. Արագածը իւր գլուխը պատռել է,
Գիշեր ցերեկ արտասվելով դատրել է,
Զի գորդիս իւր օտար սէրը պատրել է,
Ասացէք եթէ ես չի լամ բաս ո՞վ լայ։

5. Արմաւիրը սեւ է հագել ոտից գլուխ,
Վաղարշապատը հուր չունի է լոկ ծուխ,
Հայաստան եղել է անգունդ մառախուղ,
Ասացէք եթէ ես չի լամ բաս ո՞վ լայ։

6. Մեզ նման վատ որդւոց մօր օրը սաւ է,
Ինչքան շահ թողեցինք մեր հօրը սաւ է,
Սէյեադի իւր եղբարց յորդորը սաւ է.
Ասացէք եթէ ես չի լամ բաս ո՞վ լայ։

*
* *

# ԵՐԳ ՍԻՐՈՅ.

1. Ունքերիդ թաղը քաշողը՝
Իմ սրտիս էլ դաղ է քաշել.
Դէմքիդ վարագը քաշողը,
Ինձ նրան մատաղ է քաշել։

2. Փայլուն աչքերըդ լոյս զուարթ,
Թուշերըդ բացված կարմիր վարդ,
Քիթըդ ականակուռ գեղարդ,
Կամ չըհելչրաղ է քաշել։

3. Պռօշներըդ յակինթ թուաշ,
Ատամըդ ինջի ծանրաքաշ,
Զի տեսել ո՛չ Հինդ ո՛չ Հաբաշ,
Լեզուդ էլ ղայմաղ է քաշել։

4. Կլափըդ է կեղևեալ ձու,
Վիզըդ մինայ սրինգ ազգու,
Ծիծըդ նարինջ քաղցրաթթու,
Լանջքըդ բաղչայ բաղ է քաշել։



5. Մէկ ասա ո՞վ է քոյ տէրըդ,
Զի խաբես ուտեմ ծըծերըդ,
Մի վախիլ եդ շուխ պատկերըդ,
Սէյեադը յոյժ վաղ է քաշել։

*
* *

# ԱՌ

Հրաշագեղ օրիորդ Ալտուաջանին։

Քոյ ձեռից զանգատ ո՞ւր գնամ,
Ինչ որ խոստացար տո՛ւր գնամ,
Անունըդ անգութ կը կոչեն,
Թէ քոյ մօտից տխուր գնամ։

Աստուած քեզ իւր առատ ձեռնով —
Գեղեցկութիւն տուաւ բեռնով,
Դուրս մի՛ ձգեր գիս ձմեռնով.
Լաւ պահպանի՛ր մինչ ուր գնամ։

Քոյ անունըդ է Նազինկայ,
Թշնամիդ չարի ղադին գայ.
Մօրըդ սիրածն էր Մատինկայ,
Սրտիս դարդերը լո՛ւր գնամ։

Ջեռիդ իրաւունք շատ ունիս,
Իմ յոյսը միմիայն դուն իս.
Թէ խնդիրքս չի ընդունիս,
Մեղքս ինձ հասկացո՛ւր գնամ։

Ջեր տանը շատ եմ կերել հաց,
Հայրըդ լաւ մարդ էր ձեռնաբաց.
Ափսոս որ մայրըդ շատ . . . . ց,
Դու էլ տո՛ւր մէկ համբոյր գնամ։

Բուրաստանըդ խար է մտել,
Արեգակըդ մար է մտել,
Սէյեադը քեզ ճար է գտել,
Զ՛ուզես գլուխս տո՛ւր գնամ։

*
* *

# Տ Ա Ղ.

'Ի մահն Վարժապետեան Հայրապետին [illegible] [illegible].
ըստ եղանակի „[illegible]“ երգոյն:

1. Թշուառ Հայաստան տուն ատելութեան,
Փութա՛ բըժշկել գլերք քոյ բնութեան,
Քանզի յաւն այն չունի դեղ և ճար,
Որ գաղտ հասանի վերին ուժգնութեան։
Ո՛հ ո՞ւր ես, ո՛հ ո՞ւր ես, ո՛հ ո՞ւր ես,
Աննման Ներսէս։

2. 'Ի ծննդենէ էր նա քեզ հարազատ,
Դու եղեր նմա ծնող անհաստատ,
Թէև լինէիր մայր արատութեան,
Իքէն օտարաց չէր առնել գանգատ,
Ո՛հ ո՞ւր ես և այլն։



3. 'Ի սէր քոյ կրեաց բազում աշխատանք,
Ետես շատ լաւ օր և շատ անարգանք,
Որդիք քոյ իբրև Կայէն ոխացեալ,
Հասուցին նմա վիշտ և սոգտանք։
Ո՛հ ո՞ւր ես և այլն։

4. Վատ արարք նոցա էին անսահման,
Ջեդ Յուդայ նմա եղեն դաւաճան,
Ապերախտութիւն նոցին յայտնապէս,
Իջոյց զնա 'ի մութն գերեզման։
Ո՛հ ո՞ւր ես և այլն։

5. Այսուհետև դու հազար աշխատես,
Պտուղ չես տալ զի նեխեալ արմատ ես,
Ինչ որ ծնանիս պիտի լինի հրէշ,
Թէ չես հաւատում փորձի՛ր ահա տես։
Ո՛հ ո՞ւր ես և այլն։

6. Կորուսիր գահըդ կորուսիր թագըդ,
Խաւարեցաւ քոյ լոյս արեգակըդ,
Այնպիսի որդի էլ չես գտանել՝
Որ նա ուղղէ քոյ վատ վիճակըդ։
Ո՛հ ո՞ւր ես և այլն։

7. Նա էր միմիայն որդիդ պարզերես,
Յոյս չ'կայ մէկն էլ ծնանի այնպէս,
Դարք և ժամանակք շատ կըլլրանան՝
Որ հառաչանօք կասես ո՛հ Ներսէս։
Ո՛հ ուր ես և այլն։

8. Թո՛ղ որ իմ վկայս լինի Սէյեադը,
Քրիստոնէական կրօնին հաստատը,
Որ ըստ Փրկչական անսուտ հրամանի,
Լաւը անցել է մնացել է վատը:
Ո՛հ ո՞ւր ես և այլն:

*
* *

## ԵՐԳ.

Ըստ եղանակի „առ ալմէնաղ" երգոյն. յօրինեալ ըստ զօրութեան սկզբնական բանից սուրբ Աւետարանին Յովհաննու:

$18^{25}_{1}60$.

Սկզբումն էր բանն և էր առ Աստուած,
Նա Աստուծոյ բանն էր և իսկ Աստուած,
Ամէն ինչ նրանով եղև ինչ եղև՝
Նովաւ գոյացաւ ամէն ստեղծուած.
Մարդասէր, մարդասէր, մարդասէր—
Է և փրկիչ մեր:

Նրանով կեանքն էր որ էր լոյս մարդկան,
Խաւարը կոյր էր չի ծանեաւ նրան,
Թէ և լոյսը իւր՝ լոյսը տալիս էր՝
Խաւարն ընտրեցին նրան չ՛ընկալան:
Մարդասէր և այլն:



Աստուած առաքեաց յաշխարհ մէկ լրտես—
Որոյ անունըն էր սուրբ Յովհաննէս.
Զի վկայեսցէ նա վասն լուսոյն՝
Նովաւ ի հաւատ անցէ նա ըզմեզ:
Մարդասէր և այլն:

Նա չէր իսկ լոյսն այլ էր քարոզող,
Զայն լուսոյն որ է մարդ լուսաւորող,
Աշխարհ նրանով գոյութիւն էառ՝
Նա իւր Արարչին չ՛եղև ճանաչող:
Մարդասէր և այլն:

Նա ինքն իւրայնոց մէջին յայտնեցաւ,
Բայց 'ի նոցանէ չի ընդունեցաւ.
Իսկ ով որ նրան հոգւով հաւատաց,
Որդի Աստուծոյ նա անուանեցաւ:
Մարդասէր և այլն:

Հաւատացեալը ոչ արիւնից է—
Եւ ոչ հողեղէն մարմնոյ կամքից է,
Մարդկային կամքից նա ազատ գոլով—
Նորա ծնունդը Աստուածանից է:
Մարդասէր և այլն:

Բանն մարմնացաւ ընդ մեզ բնակեցաւ,
Հայրական շնորհօք և փառօք լցաւ.
Տեսեալ զայսուիկ իսկական աչօք—
Սէյեադի միտքը լուսաւորեցաւ:
Մարդասէր և այլն:

ՎԵՐՋ:

17154 - 17158

2013